

14801

Ա. ԱՐՇԱԿՈՒՆԻ

ՎԱՅԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆ

ԽԻ

ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԱԽԱՌԱԿԱՆ

ԺՈՂՈՎԸ

ՏՊ. Ե ԶՐԱԶԳԱՆՆԵ
ԲԼԵՐՈՒԹ
1927

9(47.925)
Խ-92

9(47.925)

05 SEP 2011

Ա-92 Ա. ԱՐՇԱԿՈՒՆԻ

24 JAN 2006

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆ

ԵՒ

ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԱԻԱՌԱԿԱՆ

ԺՈՂՈՎԸ



ՏՊ. «ՀՐԱԶԳԱՆ»
ԲԷՅՐՈՒԹ
1927



14801

25 .02. 2013



(31507.64)

1634-64



Վ. Ա. Հ. Ա. Ն. Վ. Ա. Բ. Դ. Գ. Ե. Ն. Ե. Ն.

1882-1926

ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ

Լիբանանի Ազգային գաւառական ժողովի Երեսփոխան Վահան Վարդապետեանը սպանուել է Բէյրութի մէջ, 1926 թուի Սեպտեմբեր 28-ին: Նա թողել է սնեստապէս անապահով վիճակի մէջ կնոջը եւ իր երեք անչափահաս գաւակներին: Հանգուցեալի բարեկամները նորոշեցին մի *Փոնդ* հիմնել՝ Վահան Վարդապետեանի անունով, սնեստապէս ապահովելու համար նահասակուած հասարակական գործչի ընտանիքը եւ պատշաճ կրթութիւն տալու նկատմամբ նրա որդիներին:

Սոյն աշխատութեան հրատարակութեան նպատակն է.— *մեծացնել այդ Փոնդը՝ գրքոյկի սպառումից դուրս յայտնաբերել հասոյթով: Յուսով ենք, որ ընթերցող հասարակութիւնն ընդառաջ կերբայ մեր այս ցանկութեան իրագործմանը:*

Գրքոյկը գրուած է առանց նիւթական ունեւ ախլակալութեան՝ մեր կողմից:

Ա. Ա.

25 Փետրուար, 1927 թ.

Բէյրութ.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հրատարակութեան յանձնելով այս աշխատութիւնը, բացի նիւթական ակնկալութիւնից՝ յօգուած Վահան Վարդապետեանի անունով հիմնուած Փոնդի, մենք ցանկութիւն ենք ունեցել նաև գիտակից հանրութեան ուշադրութիւնը հրաւիրել այն ճիգերի վրայ, որ Լիբանանի 30-35 հազար հողմահար հայութիւնը գործ է դնում մեր կեանքը կազմակերպելու, հասարակական ցիր ու ցան ոյժերն ի մի հաւաքելու ու համախմբելու վրայ: Պարտաւոր ենք տարագիր բաղմութիւնները թափած եռանդն ու ոյժը լուրջ հաշուի առնել, որովհետև մեր աշխատունակ ժողովրդի ջանքերն են այդ՝ հայ հաւաքականութիւնըն առողջ ու կենսունակ պահելու օտար հողերի վերայ, օտար իշխանութեանց ներքև, մինչև որ մեր հայրենիքի փակուած դռները բացուին, և մենք հնարաւորութիւն ունենանք վերադառնալու մեր երկիրը:

Գրքոյկը կրում է «Վահան Վարդապետեան և Լիբանանի Ազգային գաւառական ժողովը» խորագիրը: Այդ անուան տակ մենք գանկացել ենք նախ՝ հայ հասարակութեան ծանօթացնել այն բոլոր փորձերի հետ, որ հայ ժողովուրդն արել է իր ջանքերն իրական դարձնելու համար, և երկրորդ՝ ցուցահանել ու հանրութեան սեփականութիւնը դարձնել եզակի պայմանների մէջ սպանուած հայ գործչի կեանքը: Մենք հետապնդել ենք այդ երկու նպատակները, որքան թոյլ են տուել մեզ մեր ձեռքի տակ եղած տրւեալները և մեր կեանքի կաշկանդող պայմանները:

Գրքոյկը բաղկացած է չորս գլխից: Առաջին գլուխն ամփոփում է իր մէջ Լիբանանի Ազգային

մարմինների առաջ գալու ձևերը՝ վերջին երկու տարուայ ընթացքում: Երկրորդ գլուխն ամփոփում է իր մէջ վահան վարդապետեանի եղեռնական սպանութիւնը, երրորդը՝ կենսագրութիւնը և բնութագիծը: Չորրորդ գլխի մէջ զետեղուած է բազմաթիւ գաւակցական հեռագիրների և գրութիւնների մի մասը միայն, զէթ մասամբ ցոյց տուու համար այն բողոքն ու զայրոյթը, որ բարձրացրեց հայութիւնն այդ քրտրմնելի ոճիրի դէմ:

Պարտք ենք համարում յիշել, սր մենք խուսափել ենք դատաւորի դեր կատարելուց: Մենք աշխատել ենք իրողութիւնները տալ այնպէս, ինչպէս որ վան նրանք: Կարեւորն այն է, որ փաստերը, երեւոյթները, նրանց կապակցութիւնն ու տրամաբանական վախճանը նկատի ունենալով, ընթերցողն ինքը գայորոշ եղրակացութեան և դատի գիտակցաբար ու բարեխղճօրէն:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Սիւրիոյ Հայ գաղութը. — Թուական տուեայներ. — Լիբանանի Հայութիւնը. — Ազգային ժամանակաւոր մարմին. — Ազգային խորհուրդ. — Լիբանանի Ազգային գաւառական ժողովի առաջին ընտրութիւնը. — Երկրորդ ընտրութիւնը:

I

Սիւրիոյ հայ գաղութն ամենից աչքառուն է իր քանակով, համեմատած բոլոր այլ գաղութների հայութեան հետ: Այդ շրջանի հայ ժողովրդի քանակի մասին վիճակագրական ստոյգ տեղեկութիւններ չկան: Մտաւոր ճշտութեամբ՝ Սիւրիոյ հայութիւնը հաշոււմ են 120 հազար: Արարական այս նորաստեղծ պետութեան մէջ մեր ժողովուրդը կեդրոնացած է զլիաւորապէս երկու մեծ քաղաքների մէջ՝ Հալէպ և Բէյրութ: Դամասկոս, նախ քան տիւրքիների ապստամբական շարժումները, մենք ունէինք 13 հազարի չափ հայութիւն: Այժմ այդ թիւը կիսուած պիտի համարել: 6-7 հազար հայութիւն ապստամբ շրջաններից հեռոճեստէ գաղթել և համախմբուել է, մեծ մասամբ, Լիբանանի սահմաններում:

Տանկատանի սահմանակից վայրերում՝ Սիւրիոյ հիւսիսային կողմը, դեռևս գտնուում է հայութեան ճնշող մեծամասնութիւնը և տեղաւորուած է Սուէիոյ Ալեքսանդրէթի, Բէյլանի, Գըրըգիսանի, Հալէպի և Ռակկայի շրջաններում: Եթէ Որոնդէս գետի գետաբերանից՝ Միջերկրական ծովի ափից սկսած, մի գիծանց կացնենք՝ Հալէպի հարաւով, դէպի Ռակկա, այս

գծից դէպի հիւսիս՝ Տաճկաստան, կը մնայ 120 հազար հայութեան 80 հազարը կամ 66,67% -ը. իսկ դէպի հարաւ՝ 40 հազարը կամ 33,33% -ը: Միջերկրական ծովի ափով, Ալեքսանդրէթի ծովածոցից սկսած մինչև պատմական Տիր (Սուր) քաղաքը, փուռած է 45 հազար հայութիւն, որ կազմում է ամբողջի 37,50% -ը. իսկ դէպի Սիւրիոյ խորքը՝ Գըրըքիսանից մինչև Դամասկոս անցնող գծի վրայ, բնակուած է 75 հազար կամ 62,50% -ը: Առանձնապէս Լիրանանի սահմաններում տեղաւորուած է 30-35 հազար հայութիւն, որ կազմում է Սիւրիոյ հայութեան 25% -29, 17% -ը: Նըկատելի է, որ Սիւրիոյ հայութիւնը հիւսիսից, արևելքից և հարաւից աստիճանաբար քաշուած է դէպի Լիրանանի սահմանները, ուր քաղաքականապէս իրեն ապահով է գտում և տնտեսապէս աւելի տանելի պայմաններ կարելի է ստեղծել:

II

Մամուլը՝ Սիւրիոյ թէ արտասահմանի, հայութեան անկազմակերպ ու աննախանձելի վիճակի վրայ լուրջ ուշադրութիւն է դարձրել և, վէրքը դարմանելու համար, բազմաթիւ դեղագրեր առաջարկել: Բայց մինչև այժմ որևէ շօշափելի արդիւնք, կարելի է ասել, չի ստացուած: Պատճառը՝ այլազան ուժերի բարդ խաչաձևումները և բազմապիսի խանգարիչ ու խառնակիչ տարրերի մուծ աշխատանքներն են:

1925 թուի գարնան Մեծն Լիրանանի հանրապետութեան քաղաքացի ցուցակագրուեցին հայերը, Ֆըրանսական հողատար կառավարութեան պաշտօնական կարգադրութեան համաձայն: Թուակտն տուեալները ցոյց են տալիս, որ հայութեան ճնշող մեծամասնութիւ-

նը հայ լուսաւորչական է: Կաթողիկ և բողոքական հայերը համեմատ թիւ են կազմում: Ուստի, պարզ է, որ աղգային կեանքի բնորոշիչը հայ լուսաւորչական համայնքի գործնէութիւնն է:

Մեծն Լիրանանի հանրապետութեան մայրաքաղաքի. Բէյրութի հասարակական—աղգային կեանքը շեկավարող մարմինն էրը քաղաքի և վրանաքաղաքի զոյգ թաղական խորհուրդներն են:

Վրանաքաղաքի Ս. խաչ եկեղեցու թաղական խորհուրդն իրաւականօրէն ենթակայ է Կիլիկիոյ կաթողիկոսին և ներկայացնում է զլուսաւորապէս Կիլիկիոյ և Հայաստանի զանազան վայրերից գաղթած ժողովուրդը: Քաղաքի Ս. Նշան եկեղեցու թաղական խորհուրդն ենթարկուած է Երուսաղէմի պատրիարքութեան և ներկայացնում է, ըստ երևոյթին, տեղացի հայ ժողովուրդը: Երկու թաղականութեանց օրինագիրքը 1863-ի Աղգային Սահմանադրութիւնն է:

Այս երկու թաղական խորհուրդների միջեւ գոյութիւն ունի ոչ վայելուչ հակամարտութիւն, որ ամէն մի քայլափոխում անդրադառնում է ժողովրդի կաղմակերպական վիճակի վրայ: Այս գաղութի հայութիւնն աշխարհիկ խոր ըմբռնումներ չունի, որ կարողանայ ինքնուրոյն կերպով, առանց հողեորականութեան հովանաւորութեան, կեանքի կոչել իր ցանկացած աղգային հիմնարկութիւններն ու մարմինները՝ իր նախաձեռնութեամբ: Կիլիկիոյ Սահակ Բ. կաթողիկոսը ձգտում է պահել իր կաթողիկոսական իրաւասութիւնները Սիւրիոյ սահմաններում: Երուսաղէմի պատրիարքը՝ ենթակայ էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսին, բնաւ տրամադրութիւն չի ցոյց տալիս զիջելու իր իրաւունքները Կիլիկիոյ կաթողի-

կոսին և իրաւասու էլ չէ: Երկու հոգեւոր իշխանութեանց այս քողարկուած բախումներն ընական անդրադարձումն է երկու թաղական խորհուրդներին անուրանալի պայքարը:

Ժողովուրդի պահանջի և մամուլի ձայնի վրայ հիմնուած, երկու թաղական խորհուրդները 1925-ի փետրուար 18-ին մի սահմանափակ խորհրդակցութիւն հրաւիրեցին: Երկու թաղական խորհուրդներին եօթական անդամներից բացի, այս խորհրդակցութեանը հրաւիրուած էին երկու ու կէս տաճնեակ աղջայիներ: Խորհրդակցութեան նիւթերն էին. Ա) հայերի Մեծն Լիբանանի հպատակութիւն ընդունելու խնդիրը և Բ) մի ազգային մարմին կազմելու հարցը:

Առաջին հարցի վրայ ժամանակ վատնելն իզուր էր, որովհետև հպատակութեան խնդիրը վճռուած էր Յրանսական հոգատար և Արարական կառավարութեանց կամեցողութեամբ՝ հայերի կամքից միանգամայն անկախ: Երկրորդ հարցի քննութիւնը վերջացաւ նրանով, որ այս խորհրդակցութիւնը ընտրեց 5 հոգուց բաղկացած Ազգային ժամանակաւոր մարմին: Այս մարմինն իրաւասու էր վարելու ազգային յարաբերական գործերը և պարտաւոր էր մի ծրագիր պատրաստել. Բէյրութի հայ կեանքը կազմակերպելու համար: Ազգային ժամանակաւոր մարմինը պիտի գործէր Կիլիկիոյ Սահակ Բ. կաթողիկոսի հետ համախորհուրդ, ունկնդիր նրա ցուցմունքներին:

Ժողովուրդը գոհ էր: Գուցէ այս կերպ հնարաւոր լինէր մի բան անել հայ կեանքը կանոնաւորելու համար:

Կիլիկիոյ կաթողիկոսն ընդունելի չհամարեց ոչ այդ ընտրութիւնը և ոչ էլ Ազգային ժամանակաւոր

մարմնի կազմը: Նա չհաստատեց այն և լուծուած յայտարարեց: Եւ չքացաւ Ազգ. ժամանակաւոր մարմինը, առանց որևէ գործի ձեռնարկելու: Բողոքներ եղան, իհարկէ: Դժգոհութիւնների ձայնը հասաւ կաթողիկոսին: Եւ, վերջապէս, ելքը գտնուեց, հրապարակի վրայ դրուեց ՅՈՐ մարմին կազմելու հարցը:

III

Կիլիկիոյ Սահակ Բ. կաթողիկոսը հրահանգեց Ս. Խաչ և Ս. Նշան եկեղեցիների թաղական խորհուրդներին՝ կազմել Բէյրութի հասարակական գործիչների, գրազէտների, յայտնի պաշտօնեաների, բժիշկների, խմբագիրների, իրաւագէտների, առևտրականների, մի խօսքով, «Երեւելիների» մի ցուցակ: Թաղական խորհուրդները պատրաստեցին 188 անձանց ցուցակը՝ «Երեւելեաց» ցանկը: 1925 թուի մարտ 13-ին երեկոյեան, այս ցուցակով հրաւիրուեց 188-ի խորհրդակցութիւնը, Ս. Նշան եկեղեցու մէջ: Ժողովին ներկայացաւ կաթողիկոսը, անձամբ բացեց ժողովը և առաջարկեց տարիքով աւագին ատենապետ, իսկ կրտսերին ատենադպիր ընտրել: Ատենապետ ընտրուեց Միհրան Տամատեանը, իսկ ատենադպիր՝ Վարդան Գրիգորեանը: Ժողովին ներկայ էին 137 հոգի, հրաւիրուած 188-ից: Կանխօրէն, կաթողիկոսի համաձայնութեամբ, պատրաստուած էր 21 հոգու եռանուն. ցանկը: Այդ ցանկից պէտք էր ընտրել եօթ հոգուց բաղկացած մի մարմին և զրուել: Ժողովը, կաթողիկոսի հրահանգի համաձայն, իրաւունք չունէր որևէ հարց արծարծելու: Ժողովի իրաւասութիւնները խիստ սահմանափակուած էին: Գաղտնի քուէարկութեամբ 7 հոգին ընտրուեց, և խորհրդակցութիւնը վերջացաւ:

Այս մարմինը, կաթողիկոսի նախագահութեամբ կաթողիկոսարանի մէջ, առաջին նիստն ունեցաւ մարտ 28-ին և, կաթողիկոսի առաջարկութեամբ, անուանուեց Ազգային խորհուրդ: Ատենապետ ընտրուեց Միհրան Տամատեանը, իսկ ատենադպիր՝ հանդուցեայ վահան վարդապետեանը: Կաթողիկոսը մարտ 30-ին պաշտօնական շրջաբերականով յայտնեց ժողովրդին, որ Ազգային խորհրդի գոյութեան ու գործնէութեան ժամանակաշրջանը 2-4 ամիս է: Ազգային խորհուրդը պարտաւոր է զբաղուել կազմական ծրարքով և Լիբանանի հայոց եկեղեցիներին, հայ որբերի ու կարօտեալների խնդիրներով: Ազգային խորհուրդն երկու թաղականութեանց վերին մարմինն է: Ժողովուրդը մեծ յոյսեր էր կապել այդ մարմնի հետ և սպասողական վիճակի մէջ էր՝ նրա անելիքների վերաբերմամբ: Սակայն, կարճ ժամանակից յետոյ, հայ բազմութիւնները միանգամայն յուսախարուեցին և սկսեցին երես դարձնել Ազգային խորհրդից: Նա քառակուսի անիւ էր դարձել և տեղից շարժուելու տրամադրութիւն չուներ: Ազգային խորհուրդն այդպէս էլ ոչինչ չարաւ՝ նկատելի և շօշափելի: Նա լռելեայն անհետացաւ, առանց իսկ իր վերջաւորութեան մասին ժողովրդին պաշտօնապէս յայտարարելու: Լուռ մնաց և կաթողիկոսը:

IV

Միւրիոյ ամենաազդեցիկ թերթը, «Նոր Փիւնիկ»ը արձագանգ տուեց ազգային կեանքի այս անց ուղարձին. նա քննեց ու քննադատեց այդ մարմինները: Որ ի զուր ժամանակ վատնեցին, առանց ժողո-

վրդի համար որևէ դրական, շօշափելի գործ կատարելու: Նոյնն արաւ նաև Բէյրութի «Ժողովրդային Տուն» լսարանը՝ կենդանի խօսքի միջոցով: Բանախօսները բաղաորեցին հանրութեան ընտրական մարմինների անհրաժեշտութիւնն այն խորին համոզումով, որ ժողովրդի քուէն ստացած մարմիններն են միայն, որ կարող են հասարակական կեանքին պատշաճ ձև ու ընթացք տալ:

Այդ քննադատութիւնները և ժողովրդի պահանջի ազդեցութեամբ, Ազգային խորհուրդը, վերջապէս, Կիլիկիոյ կաթողիկոսի հաւանութեամբ, որոշեց կազմել Լիբանանի Ազգային գաւառական ժողովը՝ ընտրութեան միջոցով, ղեկավարուելով Ազգային Սահմանադրութեամբ: 1925 թուի Մարտ 13-ին ընտրուած Ազգային խորհուրդը միայն այս քայլն արաւ՝ աշքառու: Կաթողիկոսը Յուլիս 15-ին պաշտօնապէս յայտարարեց, որ Լիբանանի Ազգային գաւառական ժողովի ընտրութիւնը պիտի կայանայ Յուլիս ամսի 26-ին Ս. Նշան (քաղաքի) և Ս. Ուաշ (վրանաքաղաքի) եկեղեցիներին շրջափակին մէջ:

Երուսաղէմի պատրիարքութիւնը նախ արգելեց Ս. Նշան եկեղեցու շրջափակի մէջ ընտրութիւն կայացնելը և յետոյ հեռագրով թոյլատրեց: Նկատելի է այս բնորոշ փաստը:

Գաւառական ժողովի ընտրութիւնները ղեկավարելու համար նշանակեցին երկու ընտրական յանձնաժողովներ, իւրաքանչիւրը 7 հոգուց բաղկացած: Ընտրութեան կարող էին մասնակցել Լիբանանի հզաւակ հայ տղամարդիկ՝ 25 տարին լրացրած: Գաւառական ժողովի անդամ կարող էին ընտրուել 30 տարին լրացրածները: Այս կէտերը, իհարկէ, համապատաս-

խան են Աղգային Սահմանադրութեան 66-րդ և 68-րդ հնացած յօդուածներին:

Դաւառական ժողովը պիտի ունենար 21 երեսփոխաններ: Այս 21-ից Բէյրութը և վրանաքաղաքը պիտի ընտրէին 14 երեսփոխան, կաթողիկոսը նշանակելու էր 3 հոգնորական, իսկ 4-ը ընտրելու էին շքըջանները: Ընտրութիւնները կայացան Յուլիս 26-ի առաւօտեան ժամը 7-ից մինչև երեկոյեան ժամը 6-ը:

Ընտրութեանը մասնակցում էին Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ կանխօրէն հրատարակել էր 14 հոգնեցանկ և Հնչակ. Սոց. Դեմոկրատ ու Ռամկավար - Ազատական կուսակցութիւնները: Այս վերջին երկու հոսանքները աշխատում էին միացած:

Ժողովուրդը մեծ հետաքրքրութեամբ մասնակցեց համաժողովրդական այս քուէարկութեան: Քաղաքում քուէարկեցին 359 անձ. իսկ վրանաքաղաքում 1136 անձ: Գումար՝ 1495: Ընտրուեցին գաւառական ժողովի անդամներ՝ Դաշնակցութեան ցուցակով, 4 թեկնածու՝ Խ. Թիւթիւնճեան, Տ. քթ. Բ. Գուլագեան Տ. քթ. Մ. Հայրապետեան, Տ. քթ. Ա. Չառուշեան և մէկ հոգի հնչակեան — ռամկավար միացած հոսանքից՝ Ա. Կէնճեան: Ընտրական պայքարի մէջ մտած երկու կողմերից Դաշնակցութիւնը շահեց 4 տեղ — 80% . իսկ հնչակեաններն ու ռամկավարները միացած՝ մէկ տեղ — 20%: Այս տոկոսական յարաբերութիւնը բաւական է պարզելու քաղաքական հոսանքների ազդեցութեան չափը և ժողովրդի հակումը:

Ինչ խօսք, որ պարտուածներն աղմկեցին: Էլ ինչ մեղադրանքներ, ինչ բողոքներ, ինչ վայնասուն. . . Այս բոլորի վրայ աւելացաւ կեղծ քուէների առեղծուածային պատմութիւնը: Քուէահամարը վեր-

ջանալուց յետոյ, երեաց, որ քուէատուփը գաղտնի բացուած և քսան ու չորս (24) աւելորդ քուէ է նետուած քուէատուփը:

Այդ ընտրութիւններին անորակելի դեր կատարեց հանգուցեալ Միքայէլ Շամտանճեանը՝ «Հայ կեանք» թերթի խմբագիրը: Նրա տպարանում տպագրուեց մի թուղթիկ, 700 կեղծ ստորագրութեամբ, և ցրուեց հասարակութեան, բողոքելով այս ընտրութեանց դէմ և բեկանում պահանջելով:

Այս աղմուկը վերջակէտին հասաւ նրանով, որ կաթողիկոսը և Աղգային խորհուրդը չհաստատեցին այդ ընտրութիւնները՝ կեղծիքն ակներև համարելով:

Այսպէս անյաջողութեան մատնուեց մի աղգային մարմինն առաջ բերելու նաև այս փորձը:

* *

Այս ձևի մի շարք փորձերը, վատնած ժամանակն ու եռանդը, աղգային մարմին ստեղծելու, յատկանշական են՝ մեր կեանքը ճանաչելու տեսակէտից և ցոյց են տալիս, թէ մեր առողջ բնազդներով հարուստ ժողովուրդն ինչպիսի ճիգեր է թափում էրբանանի գաղութահայութիւնը կազմակերպելու և հայ իրականութիւնը կանոնաւորելու համար: Պարզ է նաև խանգարիչների շարահնար գործնէութիւնը: Անշուշտ, ստեղծուած պատկերը յուսահատական չէ: Բայց որ վրդովեցուցիչ է, դրա մէջ՝ ոչ մէկ կասկած: Առհասարակ խանդարելը, խառնակելը, քանդելն ու աւերելը շատ աւելի դիւրին է, քան որևէ հանրագուտ համեատ ձեռնարկի հիմը գցելը: Եւ դեռ խառնակ շրջանի մէջ է, որ կատարւում են այդ փորձերը:

1634-64 (31507-64)



V

Մի ամբողջ տարի Լիբանանի հայ ժողովուրդը ջանքեր թափեց, որ ընդհանուր քուէարկութեամբ, համաձայն Ազգային Սահմանադրութիւնից բխած օրէնքների թելադրանքին, ընտրութիւններ կատարուեն, մեր հանրութեան կեանքին ուղղութիւն տրուի, և հայութեան վերաբերող տնտեսական ու քաղաքական խնդիրները լուծուեն՝ հաւաքականօրէն: Վերջապէս անհրաժեշտ էր, որ կանոնաւոր ու օրինական կապ ստեղծուէր հայերի և ֆրանսական հոգատար կառավարութեան ու տեղական արաբ իշխանութեան միջև:

Յնկերքելի փաստ է, որ հայ հեղինակաւոր մարմինների շարունակական և յաճախակի շփումներն՝ օտար ժողովրդների և կառավարութեանց հետ, կարող են վերջինները փոխադարձ հասկացողութեան ու ձանաչման բերել և նպաստել, որ քաղմաթիւ թիւրիմացութիւններ պարզուեն ու հեշտութեամբ վերացուեն:

Վերջապէս հանրութեան խօսքը, մամուլի և լրսարանների սուր, բայց անաչառ քննադատութիւններն իրենց դրական հետեանքն ունեցան, Կիլիկիոյ Սահակ Բ. կաթողիկոսը Լիբանանի Ազգ. գաւ. ժողովի երկրորդ ընտրութիւնների հրահանգը տուաւ: Նըշանակուեց ընտրական յանձնաժողովը, որը յունիս 25-ին հրատարակեց իր հրահանգը: Համաձայն այդ հրահանգի, գաւառական ժողովը պիտի կազմուէր, ինչպէս առաջին անգամ, 21 հոգուց, որից 3 հոգին՝ հոգևորական, նշանակելու էր կաթողիկոսը, 14 հոգին ընտրելու էր Բէյրութ քաղաքի ու վրանաքաղաքի հայութիւնը,

իսկ մնացած 4-ը շրջանները՝ մէկական, ծիւնիէ-Ղազիր, Զահլէ, Տրիպոլի և Սայդա-Սուր:

Քուէարկութեան մասնակցելու իրաւունք ունէին 25 տարեկանից վեր բոլոր ազգայինները: Ընտրուողները պէտք է 30 տարեկանից վեր լինէին: Այս որոշումները, ինչպէս յիշել ենք վերը, բխում են Ազգային Սահմանադրութեան 66 և 68-րդ յօդուածներից: Քաղաքի և վրանաքաղաքի ընտրութիւնները կատարուեցին յուլիս 18-ին: Ընտրական յանձնախումբը հրատարակել էր կանխօրէն 42 հոգու՝ եռանուն ցանկը: Դաշնակցութիւնը և «Ազգային պլօքը» նոյնպէս հրատարակել էին իրենց ցանկերը:

Ընտրական պայքարը բուռն եղաւ, թէև միշտ օրինականութեան սահմանների մէջ: Ժողովրդական հոսանքները համալսմունքով էին երկու ուղղութեամբ մէկ կողմը կանգնած էր Դաշնակցութիւնը՝ մեռակ, վստահ իր կազմակերպական կարողութիւնների և ժողովրդի գիտակցութեան վրայ, իսկ միւս կողմը՝ ռամկավարները, հնչակեանները, որոշ չափով անկուսակցականներ, «Ազգային ժողովրդական պլօք» անուան տակ:

Բէյրութ լոյս տեսնող «Նոր Փիւնիկ» թերթի 1926-ի յուլիս 17-ի թիւ 138-ի մէջ Դաշնակցութիւնը հրատարակեց գաւառական ժողովի ապագայ գործնէութեան ծրագիր—պլատֆորմը, որի համաձայն գաւառական ժողովը, որպէս Հայոց Ազգային իշխանութիւն, պիտի զբաղուէր Լիբանանի սահմանների մէջ տեղաւորուած մեր բազմութիւնների տնտեսական, քաղաքական, ֆիզիքական ապահովութեան, կրթական, իրաւական շահերը շօշափող բազմաթիւ խնդիրներով. ասա այդ ծրագիրն ամբողջութեամբ:

«Հայրենակիցներ,

«Յառաջիկայ կիրակի, յուլիս 18-ին տեղի պիտի ունենան կիրանանի Ազգ. դաւառ. ժողովի Պէյրութի պատգամաւորներու ընտրութիւնները, որոնց պարտաւոր է մասնակցիլ 25 տարին լրացուցած ամէն հայ մարդ:

«Մեծ պարտականութիւններ դրուած են ընտրուելիք զաւառականի վրայ Ան, որպէս Հայոց Ազգային իշխանութիւն, պիտի զրաղի կիրանանի սահմաններու մէջ տեղաւորուած մեր բազմութիւններու տնտեսական, քաղաքական, ֆիզիքական, կրթական իրաւական շահերը շօշափող բոլոր տեսակի խնդիրներով և յատկապէս կոչուած է իրադործելու հետեւայ առաջադրութիւնները.—

«1.- Գաւառական ժողովը պարտաւոր է սերտ կապ ստեղծել ֆրանսական հոգատար և տեղական կառավարութեանց հետ, հայութեան օգտակարութիւնը պարզելով այս երկրի համար:

«2.- Ան բոլոր հնարաւոր միջոցները պէտք է գործադրէ ցրելու հայութեան մասին տարածուած անհիմն և դիտումնաւոր ամբաստանութիւնները, որոնք կը վրդովեն մեր ժողովրդի անդորր կեանքը:

«3.- Պէտք է օգտադործէ երկրի պետական օրէնքները՝ հիմնաւորելու համար հայութեան քաղաքացիական իրաւունքները:

«4.- Պետական իշխանութեանց նկատմամբ.— պէտք է օրինական ձեւերով ապահովէ հայ համայնքի ազգային-մշակութային ինքնավարութիւնը և պէտք է ջանայ հայ ազգային իշխանութեան հանդէպ պատկառանք ներշնչել:

«5.- Ազգային մարզին մէջ, զաւառականը պիտի ջանայ վերջ տայ ներքին ուժերու վնասակար

պայքարին և միացեալ ճիգերով պիտի ձգտի լուծել հետեւայ հրատապ հարցերը.—

«Ա) Կանոնաւորումն և բարւոքումն կրթական գործի:

«Բ) Որբերու խնամակալութեան խնդիրը:

«Գ) Ըստ հնարաւորութեան, արտագաղթի առաջն առնելը:

«Դ) Որոշել հոգեւոր տեսչութեանց իրաւասութեանց սահմանները:

«Ե) Կանոնաւորել ազգային իշխանութեան ծախսերն ու եկամուտները՝ հրապարակային հաշուետւութեամբ:

«Զ) Հոգ տանիլ վրանաքաղաքներու մէջ տեղաւորուած հայութեան վարչական, տնտեսական, առողջապահական, բարոյական կացութեան:

«Է) Կազմել կիրանանի հայութեան մարդահամարը, զուգընթացարար պարզելով մեր ժողովրդի տընտեսական վիճակը:

«Ը.- Գաւառական ժողովի պարտքն է, ասոնցմէ դուրս, զբաղիլ բոլոր այլ հրատապ խնդիրներով:

«Հայրենակիցներ՝

«Ներկայացնելով ձեզ խիստ համառօտ ամփոփումը այն ծրագրին, որով պիտի ընթանան զաւառականի անդամները, կոչ կընենք բոլորիդ, որ ձեր քուէները կեդրոնադնէք ստորե թեկնածուներուն վրայ, եթէ կուզէք որ կիրանանի հայ ազգ. կեանքը զեկավարուի բարեխղճօրէն, կրթական մակարդակը բարձրացուի, գաղթականներու նիւթական կացութիւնը բարւոքուի, ցեղին դոյութիւնը դրուի հաստատուն կռուաններու վրայ և համերաշխօրէն ազգային վերակազմութեան աշխատանքին ձեռնարկուի»:

Այս պլատֆորմը խոր ազդեցութիւն թողեց ժո-

ղովրդի վրայ, որ իր քուէով կատարեալ պարտու-
թեան մատնեց Ազգային ժողովրդական պլօքը:

Յուլիս 18-ի օրը հայ ժողովուրդը խիտ շարքե-
րով մօտեցաւ քուէատուփին և լուռ իր դատաւիճիւր
տուաւ: Քուէարկիւր բացուեց յուլիս 20-ից լոյս 21-ի
գիշերը: Ընտրական յանձնախումբը՝ յատուկ արձա-
նագրութեամբ հաստատեց, որ քուէարկութեան մաս-
նակցել են 1666 հոգի:

Այդ թուերը համապատասխան են քուէարկելու
համար արձանագրուածների թուին: Համաձայն Ազգ.
Սահմադրութեան 79-րդ յօդուածի, քուէարկութեանց
թւոյն կէսէն աւելի քուէ ստացող անձինք ընտր-
ուած են: Ուրեմն, ընտրուելու համար անձը պէտք
է ստանար առնուազն 834 քուէ: Ազգ. ժող. պլօքի
թեկնածուներից և ոչ մէկը ընտրուեց: Դաշնակցու-
թեան 14 թեկնածուները, առանց բացառութեան, ըն-
տրուեցին՝ ձայների ստուար մեծամասնութեամբ:
Օրինակ, տքթ. Անդրանիկ Չաւուշեան՝ 1618 ձայնով,
տքթ. Մելքոն Հայրապետեան՝ 1616 ձայնով, Սաչեր
Շարվարճեան՝ 885 ձայնով, Վահան Վարդապետեան՝
875 ձայնով և այլն:

Շրջանների՝ Տրիպոլիի և Չահլէի ընտրութիւն-
ները կայացան օգոստոս 1-ին, Ճիւնիէինը՝ 8-ին, իսկ
Սայրա-Սուրինը՝ 15-ին: Տրիպոլիի և Ճիւնիէի մէկա-
կան երեսփոխանները ընտրուեցին Դաշնակցութեան
ցուցակով, իսկ Չահլէի և Սայրա-Սուրի երեսփոխան-
ները՝ «Պլօքի» ցուցակով: Այսպիսով, 18 ընտրելիներից
միայն 2-ը ընտրեց «Պլօքը»: Չորս ընտրական շրջան-
ների քուէարկողների ընդհանուր թիւը 600-ի չի հաս-
նում: Լիբանանի ամբողջ շրջանի մէջ քուէարկու-
թեան մասնակցել են 2226 հոգի:

Հասարակական ոյժերի յարաբերութիւնն որոշե-
լու համար, հիմք ընդունելով Ազգային Սահմադրու-
թեան համաձայն ընտրուած երեսփոխանների թիւը,
որովհետեւ ընտրութիւններն անուանական էին, Դաշ-
նակցութիւնը մենակ տուել է ընտրեալների 88,9 % Ը,
իսկ միւս հոսանքները՝ միացած 11,1 %-ը:

Թուական այս անվիճելի տուեալները ցոյց են
տալիս, որ Լիբանանի հայուրիւնն իր տրամադրու-
թիւններով հակուած է՝ ճնշող մեծամասնութեամբ,
դեպի Հ. Ց. Դաւեանկցութիւնը:

Կիլիկիոյ Սահակ Բ. կաթողիկոսը սեպտեմբեր
3-ին հաստատեց զաւառական ժողովի ընտրութիւն-
ները և առաջին նիստը բացեց նոյն օրը՝ իր նախա-
գահութեամբ: Գաւառական ժողովի ատենապետ ըն-
տրուեց Յ. Տէր Մելքոնեանը, իսկ ատենադպիր
տքթ. Ս. Գրիգորեանը: Յետագային, սեպտեմբեր
28-ին, զաւառական ժողովի դիւանը լրացուեց
փոխ ատենապետ ընտրուեց Արմենակ Բէհեանեանը,
իսկ ատենադպիր տքթ. Միհրան Բէշիշեանը:

Մանր պարտականութիւններ էին դրուած Լիբա-
նանի Ազգային զաւառական ժողովի վրայ: Շրջանը
միանգամայն անկազմակերպ էր: Տնտեսական ճգնա-
ժամը քաղաքական անստոյգ վիճակը, Թուրքիոյ դա-
ւերը հայութեան դէմ, խուճապային գաղթը՝ գլխաւո-
րապէս Հարաւային Ամերիկա և այլուր, տեղական ո-
րոշ տարրերի անբարեացակամ վերաբերմունքը՝ հան-
դէպ հայութեան, ի մի էին խառնուել և մեր ժողո-
վուրդը դրել ծանր կացութեան առջեւ:

Յրանտական հողատար և տեղական արար կառավարութեանց մեր ժողովուրդը ներկայացնող չկար: Քաղաքական ժողով և առաջնորդ ընտրելը՝ գաւառական ժողովի կողմից, պիւտճէ կազմելը, որ լուրջ խնդիրներից մէկն է, մի խօսքով, Լիբանանի թեմի կազմակերպութիւնը և բազմաթիւ այլ հարցեր՝ կապուած մեր կեանքի հետ, դարձել էին հրամայական պահանջ:

Անդրանիկ գաւառական ժողովը այս ծանրակշիռ խնդիրների զննութեան նուիրեց չորս նիստ՝ սեպտեմբեր 3-ին, 9-ին, 16-ին, և 28-ին:

Չնայած աշխատանքների բարդութեան և դրա հետ միասին հասարակական գործիչների համետ պատրաստութեան, գաւառական ժողովը այնուամենայնիւ, համոզուած ենք, պիտի կարողանար առաջադրած բոլոր հարցերը բաւարար չափով լուծել և ժողովըդի իր վրայ դրած յոյսերը արդարացնել:

Լուրջ գործի էր ձեռնարկած գաւառական ժողովը, երբ վրայ հասան իրար յաջորդող դժբախտ դէպքերը և տակն ու վրայ արին նրա գործնէութեան բնականոն ընթացքը:

ԱԶԳ. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

1. Յակոբ Տէր Մելիկեան — ասեմապետ
2. Աւետիակ Քեհեաւեան — փոխ ասեմապետ
3. Տէր. Խոսրով Գրիգորեան — ասեմադպիր
4. » Մինեան Քեօլեան — փոխ ասեմադպիր
5. Յովհաննէս Ալեքսանեան
6. Արեակ Գալուստեան
7. Անտ Գասարեան

8. Տէր. Բենիամին Գուլագեան
9. Խոսրով Քիւրքիւնեան
10. Տէր. Մելիկեան Հայրապետեան
11. Խաչեր Շալվարեան
12. Տէր. Անդրանիկ Զաւուեան
13. Տէր. Յովսէփ Պետրոսեան
14. Տանաս Մրապեան
15. Վահան Վարդապետեան
16. Մարգիս Տեմիրեան
17. Անդրանիկ Կեմեան (Պլոֆ)
18. Մինեան Աղազարեան (Պլոֆ)
19. Դիոնիսիոս Բանանայ Տրեգեան
20. Խորէն " Գուլումեան
21. Վահան " Ներկարարեան *

* Ծանօթ. — 16 հոգի Դաշնակցութեան թեկնա ծուներն են, 2 հոգի «պլօք»-ի, իսկ 3 հոգեւորականները նշանակուած են կաթողիկոսի կողմից:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Մամուլի կարծիքը եւ գաւառականի Սեպտեմբեր 16-ի նիստը.— Գաւառների խառնակութիւնները.— Սեպտեմբեր 28-ի նիստը.— Քաղաքական ժողովի ընտրութիւնը.— Յարձակում գաւառականի վրայ.— Վ. Վարդապետեանի սպանութիւնը.— Յուդարկաւորութիւնը:

I

Ընտրական պայքարը վերջացաւ: Հասարակական-պետական իւրաքանչիւր զիտակից գործիչ պարտաւոր է հաշտուել ամէն մի ընտրական պայքարի արդիւնքի հետ, կատարուած օրինականութեան սահմաններում: Ապօրինութեանց մասին է միայն, որ կարող է բողոքի խօսք լինել ժամանակին ու տեղին: Եթէ ընտրութեանց արդիւնքը հաստատուի օրէնքի հիման վրայ, այլևս ասելիք չի մնայ: Եթէ ընտրական օրէնքն է անհամապատասխան մեր կեանքին, պէտք է ձգտիլ փոխելու այն: Եթէ գործադրողներն են անկարող, նրանց պէտք է հեռացնել հասարակութիւնէն: Այս ըմբռնումով է, որ առանձնապէս Քէյրուէթի «Նոր Փիւնիկ» և Գահիրէի «Յուսարեր» թերթերը յատուկ խմբագրականներ նուիրեցին Լիբանանի Ազգային գաւառական ժողովի ընտրութիւններին և կոչ արին հաշտուել ընտրութեանց հետեանքի հետ՝ ընտրութիւններն օրինական ձևով հաստատելուց յետոյ և յորդոր կարգացին վերջ տալ գաւառա-

կանի շուրջ ստեղծած պայքարներին և կոնգրեսի համաշխարհակցութեան ու համադործակցութեան ըսկըզբունքի վրայ ու նպաստել գաւառական ժողովի աշխատանքների յաջող ընթացքին:

Այդ յորդորները, սակայն, մնացին ձայն բարբառոյ յանապատի: Ոչ լսող կար և ոչ էլ հասկացող: Վիրաւորուած էին ու վրդովուած, չգիտես ինչո՞ւ և ումնից:

Մի շարք շարամիտներ՝ պարզապէս հանրութեան թշնամիներ, որոշեցին խանդարել օրինաւորապէս հրաւիրուած Լիբանանի Ազգ. գաւառական ժողովը:

Երբ խորհրդակցութիւնները վերջանում էին, այդ խելացնորներն երեսփոխաններից ոմանց կռակից էին ընկնում, անվայել խօսքեր նետում, քարեր շրպըրտում, անտեղի ծիծաղում ու ծամածռութիւններ անում, որպէսզի երեսփոխանները զգուած, այլևս ժողովի չգնան: Գաւառական ժողովի երեք նիստերի ընթացքին այդ նկատելի էր, և երեսփոխաններից ոմանք ջղայնացել էին այդ անվայել արարքներից:

Երեսփոխանական ժողովը խանդարուում էր նաև ներսից: Եւ խանդարողը Սայդայից ընտրուածն էր՝ «Պլօք» ի թեկնածուն: Գաւառականի առաջին ժողովը սեպտեմբեր 3-ին կաթողիկոսը բացեց իր նախագահութեամբ, շնորհաւորեց ժողովրդի ընտրեալներին և աշխատանքներին յաջողութիւն մաղթեց: Ժողովն առաջարկ բերաւ՝ մի գրութեամբ կաթողիկոսին զանուակութիւն յայտնել, ժողովրդի կողմից վստահութիւն վայելող երեսփոխանական ժողովը կեանքի կոչելու համար և պարզել գաւառականի յետագայ անելիքները: Սայդայի ներկայացուցիչն ընդդիմացաւ այս առաջարկին, կաթողիկոսի հասցէին ոչ

վայել ձևով արտայայտուեց, նպատակ ունենալով վերաւորել նրան և առաջին իսկ օրերից սառնութիւն մտցնել կաթողիկոսի և գաւառական ժողովի միջև: Յետագայ բոլոր ժողովներին նա բացորոշ կերպով խանգարիչի ընթացք էր բռնել մինչ այն աստիճան, որ ղուեկնդրելու համար ժողովներին յաճախողներն անգամ ջղայնանում էին: Նրա ցանկութիւնն էր վարկարեկել գաւառական ժողովը ժողովրդի աչքում և հնարաւորութիւն չտալ ընտրելու քաղաքական ժողովը, որպէսզի գործ չկատարուի:

Այսպիսի միջնորդի մէջ էր, որ կայացաւ Ազգային վարժարանի շէնքի մէջ, Սեպտեմբեր 16-ին, գաւառական ժողովի երրորդ նիստը: Այդ նիստի մէջ Սայրայի ներկայացուցիչը, որ ընտրուած էր ընդամենը 51 ձայնով, ոչ միայն նորից սկսեց խանգարել ժողովի աշխատանքներն իր շատախօսութեամբ, այլ և երեսփոխաններին սկսեց անտեղի նկատողութիւններ անել, առանց ատենապետից ձայն խնդրելու խօսիլ ու սրան նրան հեզնել: Նա օգտուում էր ատենապետի զիջող վերաբերմունքից, գաւառական ժողովի անդամների համբերատարութիւնից և ժողովի օրակարգի հետ կապ չունեցող բազմապիսի հարցեր էր յարուցում, ժողովի կանոնաւոր ընթացքը շեղելու դիտումով: Այդ օրը Սայրայի ներկայացուցիչն առանձնապէս սկսեց հեզնել երեսփոխան վ. Վարդապետեանին, որը օգտուում էր ազդեցութեամբ՝ ժողովի վրայ: Նրա խօսքը կշիռ և յարգ ունէր ժողովի համար: Ուրեմն, պէտք էր, որ նա վարկարեկուէր:

Ժողովի ընթացքին արդէն զրգուում էին երեսփոխանները, ներկայ եղող հասարակութիւնը և յատկապէս վ. Վարդապետեանը: Նիստը լրանալուց

յետոյ, վ. Վարդապետեանը և Սայրայի ներկայացուցիչը վէճի են բռնուում: վ. Վարդապետեանը խառնակիչ է անուանում Սայրայի ներկայացուցիչին, իսկ վերջինս վ. Վարդապետեանին՝ սրիկայ: Վէճին խառնուում են ժողովասրահի մէջ գտնուողները և ծեծում Մ. Աղազարեանին՝ Սայրայի ներկայացուցիչին:

Այս միջադէպը տրամաբանական պարզ եզրակացութիւնն էր այն ընթացքի, որի մէջ գտնուում էր «Ժողովրդական պլոքը», սկզբից ի վեր, իր պարտութեան հետեւանքով:

II

Արդէն յիշեցինք Լիրանանի 30-35 հազար հայութեան թափած ձիգերի մասին՝ կանոնաւորելու և ի մի ամփոփելու հայութեան ցրուած ուժերը:

Ընդդիմադիր խմբակցութիւնները ձիւնիէի մէջ, գաւառական ժողովի ընտրութիւնների օրը, Օգոստոս 1-ին, դրամ են վճարում մի շարք աւաղակաբարոյ մարդկանց, կազմում մի վոհմակ և Բէյրութից ծածուկ փոխադրում ընտրութեանց վայրը ու ձամբաները կտրում:

Ընտրական պայքարը կազմակերպելու համար, ի հարկէ վայելչութեան սահմանների մէջ, ձիւնիէից Ղազիր է մեկնում մի այլ խումբ, առանց վայրկեան անգամ մտածելու, որ ձանապարհին կարող են յարձակուել գաւաղբորէն իր վրայ: Բայց ձամբան կը տրոււմ են յօշոտելու, ո՞վ գիտէ, զուցէ և սպանելու համար մարդկանց, որոնց յանցանքը այն է եթէ յանցանք է՝ որ աշխատում են իրենք ձայներ շահելու է տեղի ունենում, ծեծ, հայհոյանք:

Կռիւնները սրանով չեն սահմանափակուում: Ընդհակառակը, զարգանում և լայն ծաւայ են ստանում: Աղմկարարները ծեծուում և հեռանում են շիրենիէից:

Զահլէում, Լիրանանի նախկին մայրաքաղաքում, գաւառական ժողովի ընտրութիւններին, Դաշնակցութիւնը, ասել ենք արդէն, անյաջողութեան ենթարկուեց: Հակառակորդներն անմիջապէս հանրագրութիւններ պատրաստեցին, ստորագրութիւններ հաւաքեցին և ներկայացրին Սահակ Բ. կաթողիկոսին այն պատրուակով, որ Զահլէում Դաշնակցութիւնը գաւառական ժողովի ընտրութիւններին պարտութիւն է կրել, և թաղական խորհուրդն ու նրա ատենապետը դաշնակցականներ են, ուստի պարտաւոր են անմիջապէս հրաժարուել, որովհետև այլևս բարոյական իրաւունք չունեն մնալու թաղական խորհուրդի մէջ: Նրանք չհամբերեցին անգամ, որ Ազգ. գաւառական ժողովից ըխած քաղաքական ժողովը կարգադրութիւն անի և ընթացք տայ նոր ընտրութիւններին:

Թաղական խորհուրդը ստիպուած հրաժարուեց: Կաթողիկոսը նշանակեց նոր ընտրութիւն, որը կայացաւ Սեպտեմբեր 12-ին:

Դաշնակցութեան ջանքերը՝ թաղական խորհուրդ կազմել բոլոր հոսանքներից, համերաշխ ու համագործակցարար տանելու համար հայութեան գործերի զեկավարութիւնը, ապարդիւն անցան:

— Ո՛չ և ո՛չ: Պէտք է ոչնչացնել Դաշնակցութիւնը, արմատախիլ անել նրան: Աղմկում էին հակառակորդները՝ կարծամիտ:

Կատարուեցին ընտրութիւնները: Դաշնակցութիւնը պայքարում էր մեկակ, ընդդէմ միացեալ ճակատի: Եւ պարտուեց այդ միացեալ ճակատը: Հա-

կառակորդները մէկ հատ թեկնածու անգամ չկարողացան ընտրել նմուշի համար: 164 քուէարկողների կողմից, ձայների մեծամասնութեամբ, ընտրուեցին Դաշնակցութեան ցուցակի թեկնածուները միայն:

«Ազգային Պլօքը» չկարողացաւ հանդուրժել այս պարտութիւնը: Նրա կողմնակիցները դանակներով ու փայտերով յարձակուեցին քուէարկողների վրայ, մէկին վիրաւորեցին, միւսի գլուխը պատռեցին: Արիւնոտուեցին հայ մարդիկ, հայ խառնակիչների ձեռքով: Ժողովուրդը յուզուած այս անորակելի արարքներից, յարձակուեց կռուարարների վրայ և ծեծեց նրանց: Հասնող ոստիկանութիւնը հազիւ կարողացաւ զսպել ժողովրդի արդար զայրոյթը: Այս էր գաւառների վիճակը, երբ հասունացան աննախընթաց դէպքերը և հասան սպանութեան:

III

Ազգային գաւառական ժողովի Սեպտեմբեր 16-ի նիստից յետոյ, պատահած ընդհարումներն աւելի լուրջ բնոյթ ստացան, և սրուեցին յարաբերութիւնները: Հնչակեանները «գորածակատ» կաղմեցին: Ղազիրից արկածախնդիր մարդկանց մի զինուած խումբ փոխադրեցին Բէյրութի վրանաքաղաքը: Փայտերով, պող զէնքերով ու հրազէններով զինեցին նրանց և փաստորէն կռիւ յայտարարեցին Դաշնակցութեան: Վերջինս, միշտ ինքնապաշտպանութեան հողի վրայ, անտարբեր չմնաց, ի հարկէ: Մեծ, վիրաւորանք, ոստիկանութեան միջամտութիւն, խուզարկութիւններ, ձերբակալութիւններ և մի շարք բանտարկութիւններ տեղի ունեցան:

Յատկապէս Վ. Վարդապետեանը խիստ հետա-

պնդւում էր՝ սխտեմատիկ կերպով, հնչակեանները զինած խմբերի կողմից:

Գաւառական ժողովի չորրորդ նիստը նշանակւած էր Սեպտեմբերի 28-ին, երեկոյեան ժամը չորս և կիսին, Կիլիկիոյ Սահակ Բ. կաթողիկոսի բնակարանի մէջ: Այդ նիստի նախագահն էր, կաթողիկոսի հրահանգի համաձայն, Խաղ վարդապետ Աջապահեանը: Ժողովին ներկայ էին 15 երեսփոխաններ: Այդ օրուայ օրակարգի մէջ էր մտցրուած քաղաքական ժողովի ընտրութեան խնդիրը: Սայդայի ներկայացուցիչը, ըստ իր սովորութեան, գրուցարանութեամբ ու երկարապատում անխմատ ճառերով նիստը ձգձգեց այնքան, որ մութը կոխեց: Մթնելուց յետոյ, ինքը, երբ ժողովըն սկսեց անցնել քաղաքական ժողովի ընտրութեան, հեռացաւ նիստից:

Սայդայի ներկայացուցիչ՝ Մ. Աղազարեանի հեռանալուց յետոյ, դեռ մի ժամ չանցած, երբ քաղաքական ժողովն արդէն ընտրուած էր, երեկոյեան ժամը 8-ի մօտերը, մի խումբ զինուած չարագործներ կառքերով եկան կաթողիկոսարանի շէնքը, բարձրացան ժողովատեղին, մտան ժողովի սրահը և գնդակահարեցին երեսփոխան վ. վարդապետեանին: Ժողովի վրայ սարսափ ազդելու նպատակով, կանխօրէն ատրճանակի մի քանի հարուածներ տուին սենեակի առաստաղին և կտրեցին ելեքտրական լապտերը:

Սպանութիւնը կատարելուց յետոյ, օգտուելով մթութիւնից, չարագործները փախան:

Չախ կրճքից վիրաւորուած վ. վարդապետեանը փոխադրուեց Ամերիկեան հիւանդանոցը, ուր մեռաւ Սեպտեմբեր 28-ից լոյս 29-ի գիշերը՝ ժամը 3-ին:

Ամբողջ ժողովրդի վրայ՝ հայ թէ օտար, ճնշիչ տպաւորութիւն թողեց այս զազրելի ոճիրը, որ գործեցին հայ մարդասպանները:

Միհրան Աղազարեանը նոյն գիշերը ձերբակալուեց ոստիկանութեան կողմից: Ձերբակալուեց նաև հնչակեան Միսակ Վեհունին, մի քանի այլ անձանց հետ:

IV

Երեսփոխան վահան վարդապետեանի սպանութեան առիթով, Հ. Յ. Դաշնակցութեան Սիւրիոյ Կ. Կոմիտէն հետեւեալ մահազգը հրատարակեց Սեպտեմբեր 29-ին:

«Հ. Յ. Դաշնակցութեան Սիւրիոյ Կ. Կոմիտէն և տեղական բոլոր մարմինները խորունկ կսկիծով կիմացնեն անակնկալ և դաւադրական սպանութիւնը ազգային ծանօթ գործիչ ընկեր վահան վարդապետեանի, որ տեղի ունեցաւ երէկ, երեքշաբթի երեկոյ, ժամը 8-ին «Կաթողիկոսարան»ի մէջ, խումբ մը դարանակալ և ստոր ոճրագործներու կողմէ, Ազգ. դաւառականի վրայ կատարուած յարձակումի ընթացքին:

«Բաշ գիտակից ոճրագործներու և մեղսակիցներու ինքնութեան, կ'ըսպասենք արդարադատութեան ձեռք առնելիք ազդու միջոցներուն՝ պատժելու համար յանցաւորները:

«Մեր տարաբախտ ընկերոջ թաղման արարողութիւնը պիտի կատարուի այսօր, կէս օրէ յետոյ, ժամը 3-ին, Ս. Նշան վանքի կեղեցիկին մէջ, ուրկէ մարմինը պիտի փոխադրուի ազգային գերեզմանատուն:

«Կը հրաւիրուի ամբողջ հայ ժողովուրդը ներկայ դանուելու ազգային անձնուէր գործիչ ընկեր վահան վարդապետեանի յուզարկաւորութեան:

Հ.Յ.Դ. Սիւրիոյ Կ. կոմիտէն:

Սեպտեմբեր 29-ին, կէս օրից յետոյ, ժամը 3-ին, տեղի ունեցաւ երեսփոխան Վ. Վարդապետեանի յուղարկաւորութեան տխուր հանդէսը՝ աննախընթաց շուքով և հանդիսաւորութեամբ:

Ժամը երկու ու կէսից-գրում է ձնոր Փիւնիկ»ի (թիւ 170) մէջ Հայկ Արամը—խուռն բազմութիւնը արդէն հաւաքուած էր Ամերիկեան հիւանդանոցի սրահի մէջ, ուր գտնուում էր երեսփոխան Վահան Վարդապետեանի մարմինը: Ժամը ձիշտ 3-ին հսկայ թափօրը շարժուեց: Մի խումբ ընկերների ձեռքերի վրայ և բազմաթիւ ծաղկեպսակներ առաջից, եկեղեցի բերուեց Վ. Վարդապետեանի մարմինը: Բոլոր յուղարկաւորներն էլ, առանց խորութեան, արցունք ունէին իրենց աչքերի մէջ և անխօս ու լուռ հետևում էին դագաղին: Յուղարկաւորների աւելի հոծ և ստուարաթիւ բազմութիւն արդէն, ժամանակից առաջ, լցուած էր Ս. Նշան եկեղեցու շրջափակը: Ժամը 4-ին եկեղեցի հասաւ դագաղը, ուր ներկաները բոլորն էլ մի քանի վայրկեան լուռ մնալուց յետոյ, ըսկսեցին հեկեկալ: Հազարաւոր յուղարկաւորներից մէկը չկար, որ արցունք չունենար իր աչքերում և ցաւ ու զայրոյթ՝ սրտում: Եկեղեցին և բակը ծայրէ իծայր լցուած էր: Շրջափակի մէջ Հ. Բ. Ը. Միութեան Գէլէկեան որբանոցի սաներից մի խումբ ի յարգանս երեսփոխան Վ. Վարդապետեանի թանկագին յիշատակի, երկու շարքի վրայ սկառուտական բարևի էր կեցած:

Եկեղեցական արարողութիւնը վերջացնելուց յետոյ, դագաղը յուղարկաւորների ձեռքերի վրայ բարձր բռնած, դուրս հանուեց եկեղեցուց և լաց ու արցունք պատճառեց ներկաներին:

Չոյգ-զոյգ որբերի կողմից բռնուած 30-ից աւելի ծաղկեպսակներին հետևեցին գագաղը և յուղարկաւորների թափօրը: Առջևից եփրեմ Տահմուշի, Պաք Աջապահեան, Գէորգ Ճանսըզեան վարդապետները և մի խումբ քահանաներ, եկեղեցական տխուր երգերով, քայլում էին դէպի գերեզմանատուն: Թափօրի մէկ ծայրն արդէն հասել էր փողոցի վարի անկիւնը, իսկ միւս ծայրը դեռ չէր սկսել դուրս գալ եկեղեցուց: Տեղացիները՝ զարմացած այս աննախընթաց և մեծաշուք յուղարկաւորութիւնից, փողոցներն էին թափուում հասկանալու համար. թէ՛ ո՞վ է մեռնողը: Բէյրութի մէջ դեռ նման բազմութեամբ և շուքով յուղարկաւորութիւն տեղի չէ ունեցած, ոչ միայն հայկական շրջանների մէջ, այլ նոյնիսկ տեղացիներին մէջ:

Թափօրը միևնոյն լուծութեամբ և ցաւով դագաղին հետևեց՝ մինչև գերեզմանատուն: Թաղման արարողութիւններն աւարտելուց յետոյ, գերեզման յանձնուեց մեր այնքան յարգելի ընկերը, անդամանելի վէրք բանալով իրեն ճանաչողների սրտի մէջ:

Ծաղկեպսակներ էին դրել դագաղի վրայ, բազմաթիւ ընտանիքներից բացի, հետևեալ հայ պաշտօնական մարմիններն ու միութիւնները. — Հայ ազգային գաւառական ժողովը, Հայ կարմիր խաչը, ձնոր Փիւնիկ»ի խմբաբազմութիւնը, Ռամկավար-Աղատական կուսակցութիւնը, Հ. Յ. Դաշնակցութեան Սիւրիոյ Կետր. Կոմիտէն, Բէյրութի և վրանաքաղաքի կոմիտէները, Կիւրիսի հայրենակցան միութիւնը, Հ. Յ. Դաշնակցութեան պատանեկան միութիւնը, Բրիտափոր ու Ակնուշի խմբերը և այլն:

ԵՐՐՈՐԴ ԳՂՈՒԽ

Վահան Վարդապետեանի կենսագրութիւնը.—
 Սացաձ կրթութիւնը.— Անճնական կեանքը.—
 Հասարակական գործիչ.— Նրա յեղա-
 փոխական անցեալը.— Բնութագիծը:

I

Վահան Վարդապետեանը ծնուել է 1882 թուի Յունուար 22-ին՝ Կեսարիոյ մէջ: Նրա ծնողները Կիւ-
 րինցի էին: Հայրը՝ Սարգիս Վարդապետեանը, զբաղ-
 ւում էր կերպասի վաճառականութեամբ: Նա զբաղէտ
 էր, կանոնաւոր ուսում չէր ստացել և հասարակա-
 կան գործերով չէր նետաքրքրուում: Մայրը, տիկին Տի-
 րուհին՝ մի համեստ հայ կին, թրքախօս է: Վահանն
 իր ծնողների հինգ զաւակներից երրորդն էր՝ ծնուած
 հայկական մի համեստ ընտանիքի մէջ:

Հայրը փոքրեկ Վահանին տուել է Կեսարիոյ Ս.
 Լուսաւորիչ եկեղեցուն կից հիմնուած նախակրթարան
 վարժարանը: Վահանն այստեղ սովորելուց յետոյ, փո-
 խադրուել է նոյն քաղաքի Ս. Կարապետ եկեղեցու
 դպրոցը: Նա դպրոցում աչքի է ընկել, որպէս ընդու-
 նակ և աշխատասէր աշակերտ: Նրա ուսումնական
 շրջանը տեւել է ընդամենը ութ տարի, և վերջացրել
 է իր ուսումը 16 տարեկան հասակում:

Ս. Կարապետի դպրոցից յետոյ, Վահանը զբաղ-
 ւել է վաճառականութեամբ՝ իր հօր խանութում:
 Որոշ փորձառութիւն ձեռք բերելով՝ ս. ուստուրի

ասպարէզի մէջ, նա մտել է Իրրանոսեան յայտնի վա-
 ճառատունը և դարձել Թոքատի ճիւղի տնօրէն: 1906
 թուին անցել է Վառնա, Ամերիկա մեկնելու դիտա-
 ւորութեամբ, ուր քեռիները պատճառ են դարձել, որ
 Վահանը նեոու երկրներ երթալու մտքից հրաժարուի:
 Վառնայում նա մտել է յայտնի վաճառական Յովհան-
 նէս Գոչուհեանի մօտ՝ պաշտօնի: Երեք-չորս տարի
 այստեղ մնալուց յետոյ, 1910 թուին մեկնել է Ա-
 դանա և, երկու տարի անց, դարձեալ վերադարձել
 Վառնա ու ամուսնացել Յովհաննէս Գոչուհեանի աղ-
 ջկայ՝ օրիորդ Աննայի հետ՝ 1912 թուին: Ընտանիք
 կազմելուց յետոյ, Վահան Վարդապետեանին նորէն
 տեսնում ենք Ադանայում և ահա համահայկական ա-
 դէտը՝ զարհուրելի տեղահանութիւնը համայն հայ ժո-
 ղովրդի, աշխարհաւեր պատերազմի ընթացքին,
 1915 թուին:

Հազար ու մի տանջանքներով կնոջ ու մէկ ե-
 րեխայի հետ, հազար ու մի փորձանքների ենթա-
 կայ, յաճախ անօթեան մնացած, Վահանը տարա-
 գրում է Ղաթմա և այդտեղից հասնում Հալէպ:

Թուրքական արիւնոտուշտ կառավարութիւնը
 խիստ հետապնդում է նրան: Եւ, եթէ ձերբակալ-
 ուէր՝ այն ժամանակուայ պայմաններում, անխու-
 սափելիօրէն նրա պատիժը կախաղանն էր: Սակայն
 այդ մասին քիչ յետոյ:

Դառն օրեր ապրելով, ի տես հայ ժողովրդի ան-
 հուն տառապանքի, Վահան Վարդապետեանը, շնոր-
 հիւ իր հայ թէ օտար բարեկամներին ձեռք առած մի-
 ջոցների, Հալէպից, այս անգամ արդէն երկու երե-
 խայով, կնոջ հետ, 1915 թուի Դեկտեմբերի վերջերին
 անցնում է Երուսաղէմ, ուր մնում է չորս տարի,
 վարելով արկածներով հարուստ մի կեանք:

Երուսաղէմ երկար ժամանակ անտեսական անապահով վիճակի մէջ է մնում Վահանը, ծանրաբեռնուած ընտանիքով: Այնտեղի թուրք կառավարութիւնը թրքական զօրքի հացի մատակարարութիւնը յանձնել էր Բուլղարացի Շտոկլէֆին: Վ. Վարդապետեանը մտաւ այդ գործի մէջ. շատ հասարակ պաշտօնով, աննշան վարձատրութեամբ: Բայց շատ կարծ ժամանակից յետոյ, երբ շինում ունեցաւ հացագործների հետ, հասկացան Վահանի արժանաւորութիւններն ու բարեխղճութեան չափը և յանձնեցին նրան հաշուակալի գործը, որ տարաւ բարեխղճօրէն: Վահան Վարդապետեանի ռոճիկն էր՝ օրեկան վեց հաց և ամսական չորս նապոլիոն ոսկի:

Յիշենք այստեղ մի միջադէպ, որ յատուկ է թըրքայան կառավարութեան պաշտօնեաներին: Չաւուշներից մէկը մի օր գալիս է հաց դնելու: Վ. Վարդապետանը հացը կշռում է՝ պահանջուած քանակով: Չաւուշը ստիպում է աւելի տայ՝ ձրիաբար: Վահանը մերժում է, և վէճ է ծագում: Յանկարծ Վ. Վարդապետեանի վրայ յարձակում է մի թուրք սպայ, որ քիչ հեռու կանգնած, հետեւում էր վէճին, զարկում նրան սաստիկով թէ՛ ինչպէս է համարձակում առարկել չաւուշին: Պարզում է յետոյ, որ այդ չաւուշը հացը տանելիս է եղել թուրք սպայի համար:

Այս դէպքից ուղիղ հինգ օր յետոյ թուրք սպան, գինով վիճակի մէջ, սպանում է իր տանը: Թուրք ոստիկանութիւնն անմիջապէս ձերբակալում է Վ. Վարդապետեանին, ենթադրելով, որ սպանութիւնը նա է կատարել: Հաղիւ հնարաւոր է լինում փաստերով ապացուցել, որ Վ. Վարդապետեանը սպանութիւնը կատարուած գիշերը խորհրդակցութեան է

եղել՝ Երուսաղէմի վանքի մէջ: Նա աղաւաղում է. ձերբակալւում են մի շարք այլ անմեղ հայեր, որոնցից ոմանց եղունգներն են քաշում, ոմանց ականջները կտրում, իսկ ոմանց սաստիկ ծեծի ենթարկում, խոստովանութիւն կորզելու դիտումով: Այնչէս չի իմացւում:

Երբ թուրքերը քաշում են և Պաղեստին են մտնում անգլիացիները, իրողութիւնը պարզում է: Սպային սպանողն եղել է մի հայ երիտասարդ, որի մօրն ու քոյրերին Տէր-Չօրում առեանգել ու բռնաբարել է այդ սպան: Երիտասարդը՝ վրէժինդրութեան գետնի վրայ, երկար ժամանակ հետապնդել է թուրք սպային և իր վրէժը լուծել՝ Վ. Վարդապետեանի հետ պատահած վէճից հինգ օր յետոյ միայն:

Երուսաղէմ, ասացինք, Վ. Վարդապետեանը մեաց չորս տարի: Երբ զինադադարը կնքուեց, և Սիւրիան անցաւ ֆրանսական հոգատարութեան, նա ընտանիքով տեղափոխուեց Բէյրութ, ուր և զբաղւում էր առևտուրով, մինչև իր կեանքի վերջը:

II

Վահան Վարդապետեանը՝ լի եւանդով, հայ ժողովրդի զարգացմանն ու յառաջադիմութեանը նախաձեռնողի, շիտակ և ուղղամիտ մի մարդ, չէր խանձախնդիր, շիտակ և ուղղամիտ մի մարդ, չէր կարող հեռու մնալ մեր գեղի տառապանքից: Նա որքան ընտանիքի լաւ հայր էր, նոյնքան և անձնուէր քան ընտանիքի լաւ հայր էր, միշտ գոհաբերող՝ թէ բարոյահանրային գործիչ էր, միշտ գոհաբերող՝ թէ բարոյապէս և թէ նիւթապէս: Նա ոչ միայն հայասէր էր, այլ ընդհանրապէս մարդասէր էր՝ բաց ճակատով մարդ, համարձակ, շիտակ խօսքն իր տեղն ասող: Ընտանիքից շատ սիրուած հայրը, սիրուած և յար-

գուած էր նաև շրջապատից՝ հայ թէ օտար, հասարակական հիմնարկութիւններէն՝ որտեղ նա աշխատել է իր ոյժերը ներածին չափ, հայրենակիցներէն՝ որոնց փայփայել է նա միշտ, ընկերներէն՝ որոնց վերաբերմամբ եղել է սիրալիր իր յորդորներով, խորհուրդներով ու հրահանգներով:

Տարիքի հասունութեան հետ միասին, աստիճանաբար լայնացել է վահան վարդապետեանի հանրային գործնէութեան շրջանակը: Բոլոր քաղաքների մէջ ազգային-հասարակական գործերին մասնակցել է բարեխղճօրէն՝ տալով իր ժամանակի մեծագոյն մասը, միշտ արժանանալով ժողովրդի վստահութեանը:

Տրուստադէմոմ վ. վարդապետեանը «այդ ահաւոր օրերին» երբ ամէն ոք ընազգարար ստամոքսի հորիզոնից այն կողմը չէր տեսնում՝ վանքին մէջ, եւրիտասարդների մի գաղտնի խմբակցութիւն է կազմում, վանքին շրջափակին մէջ՝ կի՛գի՛չ արեւին տակ պառկած մանուկները պահելու, կերակրելու համար: Իր դիմումների շնորհիւ, այդ տեղին, վտիտ, անարիւն կմախք մանուկները «Աչան թաղէն» դուրս ելան, տակերնին փտած խտրի տեղ, քիչ թէ շատ կակուղ անկողին տեսանք*:

Յատկապէս նկատելու արժանի է նրա լերջին տարիների հասարակական բեղմնաւոր աշխատանքը: Միւրեւոյ տարազիր բազմութիւններն ուժացման ճանկերից փրկելու նպատակով, կազմուել է Բէյրութի Ազգային Միութիւնը՝ անդամակցութեամբ վահան վարդապետեանի: Ս. Նշան և Ս. Խաչ եկեղեցիների թաղական խորհուրդների նախաձեռնութեամբ, կեանքի

Ծանօթ. — Տես «Յուսաբեր», 1926, թիւ 161, 2. Մասիկեանի «Յարգանքի տուրք» յօդուածը:

քի է կոչուել Ազգային ժամանակաւոր մարմինը: Վ. վարդապետեանն ընտրուել է այս մարմնի անդամ: Կիլիկիոյ Սահակ Բ. կաթողիկոսի հրահանգով, ընտրուել է Ազգային խորհուրդը: Վահան վարդապետեանն եղել է այդ խորհրդի անդամ: Այս մարմնի անյաջողութիւնից յետոյ, հրապարակի վրայ է դրուել Լիւրանանի Ազգային գաւառական ժողովի ընտրութեանց հարցը: Անցեալ տարուայ Յուլիսին ընտրուել է հանրածանօթ գաւառականը՝ ժողովրդի քրէւելով: Գուէարկութեան մասնակցողների ստուար մեծամասնութեամբ, Վ. վարդապետեանն ընտրուել է գաւառական ժողովի անդամ:

Գաւառական ժողովը, ինչպէս յայտնի է, նիստ է ունենում կաթողիկոսարանում, Սեպտեմբեր 28-ի երեկոյան, ընտրելու քաղաքական ժողովը՝ գործադիր մարմինը, հայութեան կեանքին ու նրանից բըխելիք խնդիրներին ընթացք տալու համար: Վահան վարդապետեանը՝ գաղտնի քուէարկութեամբ, ընտրուում է քաղաքական ժողովի անդամ և, կէս ժամ յետոյ միայն, արնաթաւայ ընկնում հայ դահճի գընդակից: Հայութեան արժանապատուութեան նախանձանդիր, վահան վարդապետեանն անդամակցել է նաև այն յանձնախմբին, որ մի քանի հազար ոսկի արժողութեամբ հայ գերեզմանատան դետինն է գնել՝ Բէյրութի մէջ, և այսօր ինքն էլ թաղուած է այդ գերեզմանատանը:

III

Վահան վարդապետեանը, իր քաղաքական համոզումներով, դաշնակցական էր: Նրա երիտասարդական յեղափոխական կեանքի մասին մեր ունեցած

տեղեկութիւնները լրիւ չեն: Միակ աղբիւրը, որ մեր ձեռքի տակ կայ, իր դասընկերոջ, Վահան Գարտաշեանի մի փոքրիկ նշանակալից յօդուածն է՝ տըպագրուած «Հայրենիք» օրաթերթի 1926-ի Նոյեմբեր 3-ի թուի մէջ, Վ. Վարդապետեանի սպանութեան առիթով:

Վահանի ըմբոստ հողու ապրումները Վ. Գարտաշեանն որոշել է հետեւեալ խօսքերով. «Իմ մտածումներս կերթան ետ՝ մեր տղայութեան հրազներուն: Իմ դրացին էր ան (Վահան Վարդապետեանը), դասընկերս և իմ տղայութեան ամենէն մտերիմ երկու բարեկամներէս մին: Կենդանի կերպով կը վերջիչեմ այն յաջորդական իրիկունները՝ որ կանցնէինք միասին, նայելով կտուրին վրայ, լուսնին տակ և երազելով Հայաստանը: Մենք սրտով ապստամբներ էինք, ծնեալ յեղափոխականներ:

«Երբ Վարդապետեան Սուրբ Կարապետ գնաց, ես ալ ֆրանսացի ճիզուրտներու դպրոցը գացի. այնուհետեւ, քանի մը տարի ետք, իրարու հետք կորսնցուցինք:

«Ուրախ եմ իմանալու որ Վահան հաւատարիմ մնացած է տղայութեան երազներուն, սակայն տըխուր է մտածել սր ան կը սպաննուի իր ցեղին պատկանող ոճրագործէ մը»:

Վ. Վարդապետեան դեռ վառնայուժ կապ է ունեցել յեղափոխականների հետ: Այնտեղից տեղափոխուելով Ադանա, մտերմացել է յայտնի յեղափոխական Վահագն Տաթևեանի հետ, որին կախաղան հանեց թուրք արիւնուռչտ կառավարութիւնը, երբ հայ բովանդակ ժողովուրդը, միւս կողմից, ենթարկուժ էր զարհուրելի ջարդի:

Վահան Վարդապետեանը նոյնպէս կախաղանի

վրայ պիտի վերջացնէր իր կեանքը, եթէ չյաջողուէր նրան խուսափել թուրք լիտի ոստիկանութեան ու լրտեսների խուզարկու աչքից:

Ադանայի մէջ Վահագը կախուեց, չնայած Վահանի թափած ջանքերին և յարուցած բազմապիսի զաղտնի ու ակնյայտնի միջնորդութիւններին, ազատելու իր ընկերոջը: Թուրք կառավարութիւնը հըրահանգում է ձերբակալել Վահան Վարդապետեանին, որովհետեւ նա՝ էր հետապնդում Վահագի գործը: Այդ ժամանակ Վահանը Հայէպ էր արդէն:

Նշան Ադամեանը, որ Վահանի գրագիրն էր եղել Ադանայի մէջ, ոստիկանատուն է կանչուել և ենթարկուել խիստ հարցաքննութեան: Խուզարկու ոստիկանութիւնն ամէն կերպ աշխատում էր իմանալ Վահանի տեղը: Նշանն անտեղեակ ձեւանալով հանդերձ, անմիջապէս մի ծածկագիր նամակով իմաց է տալիս Վահանին, որ ոստիկանութիւնն իրեն խիստ փնտրում է: Քիչ յետոյ, իսկապէս զաղտնի ոստիկանութեան շնական աչքը սկսել է որոնել Վահանին՝ Հալէպի մէջ: Բայց նրան յաջողուել է միառժամանակ խուսափել հետապնդումից և, վերջապէս, յանձն առնելով կեանքի կրկնակ դժուարութիւնները, անցել է Երուսաղէմ:

Այս շրջանին Վահանն արդէն համոզուած ու կազմակերպուած յեղափոխական էր, տողորուած ազատութեան տենչով և խոր զգացող ու ապրող հայութեան ծով տառապանքն ու տանջանքը: Բնորոշ է նրա մէկ նամակը, գրուած իր կնոջը, տիկին Աննային՝ Հալէպից Երուսաղէմ՝ 1919-ի Ապրիլ 22-ի թուակիր: Նա եկել էր Երուսաղէմից Հայէպ, զինադադարից յետոյ, անհատական գործերը դասաւորելու համար, որ հնարաւորութիւն ունենայ ընտանիքը փոխա-

դրելու: Բայց արդէն գիտենք, որ նրա կայանը Բէյ-
րուժը դարձաւ: Այդ նամակով Վ. Վարդապետեանը
գրում է իր կնոջը. «Հայէպ մուտքս շատ տխուր էր՝
անցեալի տխուր յիշատակներ միշտ աչքիս առջև կը
ցցուէին, չէի ուզեր շատ անդրադառնալ այդ դառն
օրերուն, բայց կարելի չէր ըլլար, որովհետեւ իւրա-
քանչիւր քայլափոխիս կը տեսնէի ցեղիս սիրեցեալ բե-
կորներուն, ա՛հ, ի՛նչ մայրեր լացին այս Հայէպ գե-
րեզմանին վրայ:

«Միրելիս, — կը շարունակուի նամակը, — մենք
մեզ միշտ երջանիկ պէտք է զգանք գեհնէնէն զերծ
մնալնուս համար, ա՛հ, ի՛նչ սիրտեր տեսած եմ, որոնք
բեկբեկուած են իրենց բնտանիքին այս կամ այն ան-
հատին կորուստով: շատ ցաւալի վիճակ, որոնց են-
թարկուողներուն մաղթենք, որ բարեքուծմ գտնան
և մխիթարուին նոր կազմուելիք Հայաստանով, որ
իրենց արիւնին գինն է, որոնց Հայաստանն և
մենք՝ զաւակները Հայաստանին, շատ պարտք
ունինք կատարել. աշխատինք, սիրելիս, մեր պար-
տականութեան մէջ և ընենք, ինչ որ կարելի է »:

Հայութեան մեծ վիշտը ամբարած իր հոգու խոր-
քում, գալարում է անհուն դաւի կսկծից նա, «ճըն-
եալ» յեղափոխականը և միակ մխիթարութիւնը գրտ-
նում Հայաստանի ազատագրութեան մէջ:

Աւա՛ղ, երկարատե չեղաւ հայութեան ազատա-
գրութիւնը...

Մեր հողմահար ժողովրդի ծով ցաւը և ազգային
վիրաւորուած արժանապատուութիւնը վրդովում են
Վ. Վարդապետեանի հոգեկան նուրբ աշխարհը: Հայ
նահապետական օջաղի գեղանի աղջիկները՝ հանրա-
կան դարձած, տափանքի առարկայ, կեանքի երկա-
թէ ստիպողականութեան տակ...

Յատկանշական են մեր յիշած նամակի նաև հե-
տեալ տողերը. «Այս կիրակի բարեկամի մը հետ Սէ-
պիլ ըսուած տեղը գացած էի, — գրում է Վահանը, —
ուր սրճարան նստանք: Սրճարանը կար նուազ, որոնց
կը ձայնակցէին երկու մանկամարդ աղջիկներ՝ մէկը
սքանչելի գեղեցկութիւնով կը փայլէր. ըսին ինձի,
թէ՛ հայ է այդ աղջիկը և Զէյթունցի. ո՛հ, սոսկում
մը եկաւ վրաս ու անմիջապէս ելայ: Աստուած իմ,
հայութիւնը, մեր սիրելի քոյրերը այդ կեանքին ալ
վարժուեր են, ի՛նչ մեծ դժբախտութիւն մեր ցեղին.
կըսեն թէ այդ պիսիներ շատ են Հայէպի մէջ»:

Այո՛, շատ են, անտուն ու անօգնական, աշխար-
հից մոռացուած, ցրուած ամենուրեք զրուելի հարէմ-
ների մէջ... Միայն Աղգերի Դանակցութեան Հայէ-
պի Որրահաւաք Միախնի տուած տեղեկութիւնների
համաձայն, Տաւրոսեան լեռնաղթայի հարուսային
կողմը 30 հազար հոգի...

IV

Հայաստանի վայրագ տեղահանութեան և կի-
րիկիոյ շրջանը կրկնակի պարպումների պատճառով,
Միւրիա, Ֆրանսական հոգատարութեան ներքև, ան-
ցաւ 150 հազարի մօտ հայ տարագրութիւն. որը հե-
տըզնետէ նուազելով, գլխաւորապէս արտագաղթի հե-
տեանքով, հասաւ 120 հազարի: Մեր բզկտուած ժողո-
վըրդի այս խոշոր հատուածը շատ էր չարչրկուած ու ար-
նաքամ: Տղամարդիկ՝ հասուն տարիքի, կոտորուել էին,
երիտասարդները՝ մորթոտուել վայրագօրէն կամ քար-
կոծուել: Հարիւրաւորներ ու հազարաւորներ ընկել
հերոսաբար զանազան ճակատամարտերում՝ ընդդէմ
թուրքական զարդի զօրաբանակների: Տեղահանու-
թեան ընթացքին թալանուել, կողոպտուել, կանայք

անգամ տղամարդիկ մի մասով առեանդուել էին. իսկ մէկ խոշոր հատուածն էլ իր մահկանացուն կընքել էր սովից ու համաճարակների բնոյթ ստացած հիււանդութիւններից՝ Տէր—Չօրի անապատներում և այլուր:

Այսպիսով, տառապակոծ ժողովուրդը ծուարած Սիւրիական հողերի վրայ, բաղկացած էր, մեծաւ մասամբ, ծերերից, այրի կանանցից, որբերից ու որբուհիներից, անղեկ ու անղեկավար՝ առանց հոգածոյ ձեռքի:

Երկու հայկական շրջաններ, գիւղախմբեր կան Սիւրիոյ մէջ՝ հնուց հաստատուած: Քեսապի շրջանը, Որոնդէս գետի հարաւը, Միջերկրականի ափով, Կասիոս լեռան հարաւային կրճքին մեկնուած, ունէր, մինչև պատերազմը, 7 հազարի սահմաններում հայութիւն: Հնադարեան Համա քաղաքի կողմերը տարագրուելու հետեանքով, այդ ժողովուրդը 3 հազար մարդկային զոհ տուեց, չհաշուած նիւթական ահռելի վնասները և իր սեփական տնտեսութեան կատարեալ քայքայումը: Սուէտիոյ շրջանը, ծուռ խաչի ձևով դասաւորուած հայկական գիւղերով, Որոնդէս գետի հիւսիսային կողմը, գետաբերանի ուղղութեամբ, թողեց իր հայրենական օջաղը մի հերոսական պայքարով: Ընդդէմ տաճկական կանոնաւոր զօրքերի և զաղթեց՝ Քրանսական պատահական նաւերով, Եգիպտոս և վերադարձաւ իր հողերը՝ համարիա կոտորակուած, զինադադարից յետոյ: Ութ հազար հոգուց մնացել էր միայն 5 հազար՝ տարագրութեան հետեանքով:

Վրանների տոկ ծուարած, թշուառութեան ճիրաններում գալարուող բազմահազար հայութիւնը նորանոր վտանգներից ու պատահարներից գերծ պա-

հելու նպատակով, Լ. Յ. Դաշնակցութիւնը, ինչպէս ամենուրեք, Սիւրիոյ մէջ ևս գերմարդկային ճիգեր թափեց: Ուրիշ որևէ հասարակական խաւ կամ քաղաքական զօրեղ ազդակ չկար, որ կենսունակութիւն ցոյց տար այդ ասպարէզի մէջ և մեր ճշակոտոր ցեղի այս հատուածի կեանքը բնականոն վիճակի մէջ դնէր:

Հայ հոգևորականութիւնը՝ շատ համեստ իր ուժերով, անընդունակ է տարադիր բազմութիւնները ղեկավարելու նախաձեռնութիւնն իր ձեռքն առնելու: Հնչակեան կուսակցութիւնը՝ արդէն կորցրած իր բարոյական յենարանները ժողովրդի մէջ և զուրկ սեփական քաղաքական ուղեգծից, խորտակուած նաւի տաշեղների նման, իր բախտը յանձնել է փոթորկուած ծովի հուժկու ալիքներին: Իսկ Ռամկավար-Ազաւտական կուսակցութիւնը՝ քաղքենի մտածողութեամբ, ազդեցութիւն չունի հանրային կեանքի վրայ և չի ներկայացնում հայ ժողովրդի որևէ խաւը:

Իսկ Դաշնակցութիւնը՝ Նա միշտ մեր ժողովուրդի հետ, նրա առաջագահն ու արթուն պահակը, չէր կարող խուսափել ղեկավարի դերը ստանձնելուց: Դեկավարների մէջ էր նաև Վահան Վարդապետեանը, որպէս անձնուէր քաղաքական գործիչ:

Առաջին հերթին պէտք էր համախմբել կուսակցութեան շուրջը խլիզախ, համարձակ, լի եռանդով քրտասարդութիւնը, որ նոր շունչ տար կաղմակերպական գործին: Եւ ահա Վահանը՝ աննկուն յեղափոխական, պաշտօնական մարմինների մէջ աշխատանքների ղեկավար դարձաւ: Նա 1920-1922-ը եղել է Բէյրութի կոմիտէի գործօն անդամը. իսկ 1923-ից մինչև 1924 և 1925-1926 թուի Յունիսի վերջը Կ. կոմիտէի անդամ:

ները չափուժ էր տուժած արդիւնքով և ոչ թէ կանխամշակուած ծրագիրներով՝ դեռ իրագործելի:

Խոհական էր նա, շարունակ մտազբաղ, թէև երբեմն հնչեղ, բարձր ծիծաղն իր հոգու յտակութիւնն էր յայտնարեցում: Բարեկամական հաւաքոյթներին ուրախ էր, զուարթ ու զուարճացնող, Պարն ու երգը խորթ չէին նրա համար: Սիրում էր գեղեցիկը, բանաստեղծականը: Ինչ որ աշուղական ապրումներ ունէր՝ թախծախառն:

Վահանր լուրջ էր հասարակութեան մէջ, զուսպ ու զգոյշ իր արտայայտած մտքերի նկատմամբ: Կարծիքի սայթաքումը ճնշում էր նրա հոգին և ներքին լուզում պատճառում: Խօսքը կարճ էր, տրամաբանական եզրակացութիւնը հակիրճ: Ճառ չէր սիրում և ճառ չէր ասում:

Վ. Վարդապետեանն իր խառնուածքով յեղափոխական էր և, ինչպէս ասացինք, չափաւոր մտածող: Բուռն պայքարներն ու բռնի միջոցները ժըխտող էր՝ ներքնապէս: Նա միշտ ձգտում էր հայկական կուսակցութիւնների համաշխատակցութեան ու համագործակցութեան: Խոր հաւատ ունէր մեր քաղաքական հոսանքների անաղարտ ուղեգծի ու գործնէութեան մասին: Նա վշտանում էր, երբ նկատում էր անազնիւ պայքար՝ հիմնուած ստի ու կեղծիքի վրայ՝ հակառակորդների կողմից: Ինչո՞ւ չի կարելի բոլոր հայ կենսունակ տարրերը ի մի համախմբել և մէկ ճակատ կազմել, քանի որ մեր ցեղի թշնամիները շատ են և մենք լքուած ամէն կողմից:

Նա զսպիչ դեր է կատարել երիտասարդների վերաբերմամբ, քանզի ինքը զուսպ էր բնաւորութեամբ և խոհական:

Հայութեան ծոցում առաջացած ամէն մի անախորժ դէպք նրան զայրոյթ էր պատճառում: Միշտ համերաշխութեան երազող էր: Վ. Վարդապետեանի փափագն էր՝ տեսնել մեր հայրենիքն ազատագրուած, անկախ, սահմանները լայն: Միշտ մտահոգ էր, թէ՛ ի՞նչ պիտի անի բազմահազար հայութիւնը՝ ցրուած գաղութներում՝ ենթակայ աշխարհի բազմապիսի փորձանքների և ուժացման: Արդեօք կարելի չէ՞, որ բոլորս հաւաքուենք մեր երկիրը, վարենք մեր հողը, շնչենք մեր օդը . . .

Վահանը չէր կարողանում մոռացութեան տալ միայն այն բարբարոսութիւնը, որ գործեց արիւնարբու Թուրքիան, ոչնչացնելով մէկ միլիոն հայութիւն: Ճեղային վրէժը՝ ինքնապաշտպանութեան հիմունքի վրայ, միշտ բորբոքում էր նրա խոցուած հոգեկան աշխարհը: Նա ապրել էր մեր ժողովրդի զարհուրելի տառապանքը ու քամել դառնութեան բաժակը: Այստեղ էր ահա, որ փոթորկում էր նրա անհանգիստ հոգին, հրդեհում ամբողջ էութեամբ, երբ վերագարթնում էին անաւոր աւերածութեան ու արեան ցաւատանջ յիշողութիւնները: Եւ միշտ պատրաստ էր նա զոհուելու հայ ժողովրդի ազատագրութեան համար:

Եւ զոհուեց . . .
Ընկաւ հայ յեղափոխանը, լաւ մարդը, սիրուած ու յարգուած ընտանիքից, մեր ժովրդից, բոլոր ըմկերներից ու օտարներից: Նա ընկաւ, սակայն, դաւաճան հայի գնդակով:

*
**

Սրբափոխան Վ. Վարդապետեանը կատարեց իր հասարակական պարտքը՝ զիտակցօրէն: Նա նահա-

տակուեց Սիւրիոյ մէջ օթեան գտած տասնեակ հազարաւոր հայութեան կազմակերպական գործն ամուր հիմերի վրայ դնելու դժուարին աշխատանքների ընթացքին: Հայ գործիչը հրաժեշտ տուաւ այս աշխարհին այն խորին համոզումով, որ մեր ժողովրդի առողջ բնազդն ու բարձր խմացականութիւնը չեն կարող հանդուրժել պառակտուած, քայքայուած ու ներհակ ուժերով լի հայ կեանքը: Վերացնել բոլոր խոչընդոտներն ու արգելքները և յամառօրէն շարունակել Վ. Վարդապետեանի կէս ճամբին թողած հանրօգուտ աշխատանքը՝ կը նըշանակի արժէքաւորել նրա թափած արիւնը և յարգել նրա թարմ շիրիմը*:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Լիրանանի Ազգային գաւառակն ժողովը անցեալ տարուայ Սեպտեմբեր 28-ի երեկոյեան նիստին ընտրեց քաղաքական ժողովը՝ հետեւեալ կազմով. —

1. Արեակ Գայուսեան
2. Տէր. Մելիոն Հայրապետեան
3. Օննիկ Մազումեան
4. Զաքարիա Պզտիկեան
5. Արմեն Սասունի
6. Վահան Վարդապետեան
7. Վահրամ Վարժապետեան

Ծանօթ. — Գրքոյկը կազմելիս, մասամբ օգտուել ենք «Հայրենիք» օրաթերթի, «Յուսաբեր»-ի և «Նոր փիւնիկ»-ի մէջ լոյս տեսած մեր յօդուածներից:

ԶՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Կաթողիկոսի յօդուածը. — Ցաւակցական հեռագիրներ եւ գրութիւններ. — Համաժողովրդային բողոքներ. — Բանաձեւ. — Կիւրիքի հայրեցակցականի խորհրդակցութիւնը. — Մամուլի ձայնը:

I

Երեսփոխան Վահան Վարդապետեանի անակնկալ սպանութիւնը, ինչպէս յիշել ենք, ցնցող տպաւորութիւն թողեց ոչ միայն Սիւրիոյ, այլ և միւս գաղութների հայութեան վրայ: Ընթերցողներին պարզելու համար այն իրարանցումը, բողոքն ու զայրոյթը, որ առաջացրեց դաւադիրների այդ զազրելի ոճիրը, բերում ենք այստեղ սպանութեան առիթով մամուլին յանձնուած ցաւակցական հեռագիր-բողոքների ու գրութիւնների մի փոքր մասը միայն, լոյս տեսած գլխաւորապէս «Նոր փիւնիկ» և «Յուսաբեր» թերթերի մէջ:

Կիլիկիոյ Սահակ Բ. Կաթողիկոսի յօդուածը՝ «սպանութեամբ առաջին անգամ «Նոր փիւնիկ»-ի 174-րդ թուի մեջ:

ԶԱՀԼԷ—ՏՈՒՆ ՍԳՈՅ

Յաւէտ ողբաղեալ Վահան Վարդապետեան, անկեղծ և ողբախառն յարգանք նուիրական յիշատակիդ:

Ծանօթ. — «Նոր փիւնիկ» թերթը փակուած է Ա. Տ. փետրուար 5 - ին:

նը «Միթէ պահապանն իցեմ» չազատեր դաւաճանները անեղ պատուհասէն, եղբայրասպան խորանէն: Վարդապետեան, դու ալ լսէ մեր հեծեծանքը, լսէ հայրական ձայնս այն ողիով, որով սիրուեցար ամէնքէն և լացուցիր ամէնքը, երկնից բարձունքէն թելադրէ, ներշնչէ ամենուս համակիրներու և ընկերներու՝ պահել յիշատակդ սուրբ ու անտխեղծ, որպէսզի ամէն օր շիրաշուրթն կրկնենք «Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»: Սահակ Բ. Կթ. Կիլիկիոյ.

II

Կաթողիկոսի, խմբագրութիւնների, հասարակական հիմնարկութեանց եւ հաւաքականութիւնների հետազոտողները

Գաւառական ժողովի ատենապետ Յ. Տէր Մելքոնեանը կաթողիկոսին, ի Զահլէ, հեռագրով յայտնել է երեսփոխան Վ. Վարդապետեանի մահը, որին, ի պատասխան, կաթողիկոսը տուել է հետեւեալ ցաւակցական հեռագիրը. —

Տիար Յակոբ Տեր Մելոնեանից, նախագահ Ազգ. ժողովի, Պեյրուք.

Ձեր հեռագիրն ուշ ստացայ. իմ զայրոյթս ոճիրին համար և ցաւակցութիւններս ու իմ օրհնութիւններս ձեզի և իր ընտանիքին:

Սահակ Կաթողիկոս.

Տիկից Աննա Վարդապետեանից, Հայոց եկեղեցի, Պեյրուք.

Անկեղծ ցաւակցութիւններս և վշտակցութիւններս ձեր ցաւագին կորուստին համար:

Սուրեն Վրդ. Քամհանեան (Դամասկոսից)

Մեծապատիւ Տիար Ասեմապետ եւ անդամք Գաւ. ժողովի. Տէր Ատենապետ,

Տիար Վահան Վարդապետեանի եղբունական մահուան առթիւ, հաճեցէք թարգման հանդիսանալ սրտագին ցաւակութեանս:

Հանգիստ իր անգին ածիւններուն: Տնօրէն Որբ. Ընկ. Այնթապի որբանոցից Դ. Ղալիկեան (Ճիւնիէ)

«Նոր Փիւնիկ»ի խմբագրութեան

Կը սգանք աղէտալի մահը անզուգական ընկեր Վահանի: Մեր վշտակցութիւնները այրի տիկնոջ, զաւակներուն, մօրը և քրոջը: Կը դատապարտենք սուկալի ոճիրը:

Յուսաբեր (Գահիրէ)

Հ. Յ. Դաւեանկցութեան. Կ. Կոմիտէից

Մեր զայրոյթը քսամնելի ոճիրին և ոճրագործութեան: Կողքանք նահատակ ընկերոջ մահը, կը բաժնենք սուգը վշտահար Տիկին Վարդապետեանի:

Խմբագրութիւն «Նոր Օր» (Աթէնք)

«Նոր Փիւնիկ»ից

Մեր խորին յարգանքը նահատակուած ազգային անձնուէր գործիչներէն Պր. Վարդապետեանի եղբունական մահուան առթիւ և մեր զայրոյթը ոճրագործներուն հանդէպ: Հաճեցէք թարգման հանդիսանալ մեր սրտագին ցաւակցութիւններուն իր պարագաներուն քով:

Թրիփոլիի Ազգայիցներ.

Ազգ. Գաւառական ժողովի նախագահութեան Մեր վշտակցութիւնները Վարդապետեանի սպա.

նը «Միթէ պահապանն իցեմ» չազատեր դաւաճանները անկող պատուհասէն, եղբայրասպան խորանէն, վարդապետեան, դու ալ լսէ մեր հեծեմանքը, լսէ հայրական ձայնս այն ողիով, որով սիրուեցար ամէնքէն և լացուցիր ամէնքը, երկնից բարձունքէն թելադրէ, ներշնչէ ամենուս համակիրներու և ընկերներու՝ պահել յիշատակդ սուրբ ու անտխեղծ, որպէսզի ամէն օր շիրաշուրթն կրկնենք «Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

Սահակ Բ. Կթ. Կիլիկիոյ.

II

Կաթողիկոսի, խմբագրութիւնների, հասարակական հիմնարկութեանց եւ հաւաքականութիւնների հեռագիր—գրութիւնները

Գաւառական ժողովի ատենապետ Յ. Տէր Մելքոնեանը կաթողիկոսին, ի Զահլէ, հեռագրով յայտնել է երեսփոխան վ. վարդապետեանի մահը, որին, ի պատասխան, կաթողիկոսը տուել է հետեւեալ ցաւակցական հեռագիրը.—

Տիար Յակոբ Տէր Մելոնեանից, Յախագահ Ազգ. ժողովի, Պէյրուք.

Ձեր հեռագիրն ուշ ստացայ. իմ զայրոյթս ոճիրին համար և ցաւակցութիւններս ու իմ օրհնութիւններս ձեզի և իր ընտանիքին:

Սահակ Կաթողիկոս.

Տիկից Աճնա վարդապետեանից, Հայոց եկեղեցի, Պէյրուք.

Անկեղծ ցաւակցութիւններս և վշտակցութիւններս ձեր ցաւագին կորուստին համար:

Սուրեն վրդ. Քեմհանեան (Դամասկոսից)

Մեծապատիւ Տիար Ասեմապետ եւ անդամք Գաւ. ժողովի.
Տէր Ատենապետ,

Տիար վահան վարդապետեանի եղբունական մահուան առթիւ, հաճեցէք թարգման հանդիսանալ սրտագին ցաւակցութեանս:

Հանգիստ իր անգին անիւններուն:

Տնօրէն Ռբ. Ընկ. Այնթապի որբանոցից

Ղ. Ղալիկեան (Ճիւլնիէ)

«Նոր փիւնիկ»ի խմբագրութեան

Կը սգանք աղէտալի մահը անզուգական ընկեր վահանի: Մեր վշտակցութիւնները այրի տիկնոջ, զաւակներուն, մօրը և քրոջը: Կը դատապարտենք սոսկալի ոճիրը:

Յուսաբեր (Գահլորէ)

Հ. Յ. Դաւենակցութեան. Կ. Կոմիտէից

Մեր զայրոյթը քսամնելի ոճիրին և ոճրագործութեան: Կողբանք նահատակ ընկերոջ մահը, կը բաժնենք սուգը վշտահար Տիկին վարդապետեանի:

Խմբագրութիւն «Նոր Օր» (Աթէնք)

«Նոր փիւնիկ»ից

Մեր խորին յարգանքը նահատակուած ազգային անձնուէր գործիչներէն Պր. վարդապետեանի եղբունական մահուան առթիւ և մեր զայրոյթը ոճրագործներուն հանդէպ: Հաճեցէք թարգման հանդիսանալ մեր սրտագին ցաւակցութիւններուն իր պարագաներուն քով:

Քրիստոսի Ազգայիցներ.

Ազգ. Գաւառական ժողովի Նախագահութեան
Մեր վշտակցութիւնները վարդապետեանի սպա.

նութեան համար: Վստահ ենք թէ ջանք չէք խնայեր ղատական խիստ պատիժ ձեռք բերելու՝ եղբայրասպան ոճրագործներուն դէմ:

Կրթասիրաց (Լաթաքիա).

«Յուսաբեր»ի խմբագրութեան միջոցով

Խորապէս ցնցուած Պէյրութի ոճիրէն, որուն զոհնաց սիրուած, անկաշառ ու անձնազոհ ժողովրդական գործիչը, մեր նողկանքը կը յայտնենք վատանուն ոճրագործներուն, որոնք եղբայրասպան կոչուներու որոմը կը ցանեն գաղութներու մէջ և կը վտանգեն բովանդակ գաղութահայութեան ճակատագիրը:

«Նաւասարդ» սրահի Վարչութիւն (Գահիրէ).

Մարտեան 5-ին հայ պատժութեան

Եղբայրասպանութեան անաւոր երևոյթը, որ ըսկած է ծայր տալ մեր բոլոր գաղութներուն մէջ, խորապէս կը յուզէ ու կը մտահոգէ մեզ: Յաւով կուզանք արձանագրել այն դժբախտ և ամէն անակնկալներով յղի փաստը, թէ ինչպէս դէպքէդէպք ալ աւելի կը կուտակուին ոխն ու քէնը, թշնամանքն ու փոխադարձ ատելութիւնները գաղութէ գաղութ:

Վահան Վարդապետեանի՝ այդ շիտակ ու անձնուէր գործիչի եղբրական մահը չէ կարող անուշադիր մնալ բովանդակ գաղութահայութեան կողմէ:

Մենք նողկանքով կը դատապարտենք եղբայրասպանութեան ամէն դէպք և կը սպասենք որ ժողովրդական միահամուռ դատապարտութեան արժանանան այն ոճրագործները, որոնք օտար երկրի մէջ եղբոր արիւն կը թափեն, վտանգելով բովանդակ գաղութին ճակատագիրը:

37 սոնագրութիւն: (Սոյն հաւաքական գրութեան տակ յականէ անուանէ դրուած են 37 սոնագրութիւնները: «Յուսաբեր» 1926, թիւ 162).

«Յուսաբեր»ի միջոցով

Հայ լէգէոնական միութիւնս իր բոլուն ցատումը կը յայտնէ Պէյրութի ծանօթ ոճիրի հեղինակներուն և վշտակցութիւնը՝ ողբալի զոհին ընտանեացի:

Նկատի ունենալով արտասահմանի հայերու վերին աստիճանի փափուկ կացութիւնը, այսպիսի արարքները բնական է, որ շատ գէշ անդրադարձում պիտի ունենան մեր տարագիրներու ճակատագրին վրայ:

Եւ կը խնդրենք ամէն տեղի Ազգ. իշխանութիւններէն՝ կարելին իգործ դնել վերջ մը տալու համար եղբայրասպան պայքարին:

Հայ Լէգէոնական Մ. վարչութիւն.

Վ. Ասեմադպիրի՝ Գ. Անեմեան, Ասեմապէ՝ Յ. Արեւեան.

«Յուսաբեր»ի միջոցով

Գահիրէի հայ բժշկական միութիւնը խորին վրդովումով կարձանագրէ այն ծանր ու ցաւալի կացութիւնը, որ հակաժողովրդական որոշ տարրերու ոճրագործ արարքներովը կը ստեղծուի մեր բոլոր գաղութներուն մէջ, վտանգելով հայութեան ճակատագիրը: Միութիւնս իր անվերապահ դատապարտութեան խօսք կուզղէ եղբայրասպան կռիւներու ոճրագործ հեղինակներուն ու ցաւակցութիւնը կը յայտնէ զոհերու պարագաներուն:

Ի դիմաց Գահիրէի հայ բժշկական միութեան՝ Ա. սեմապէ՝ Բժժ. Հ. Օհանջանեան

«Յուսաբեր»ի միջոցով

Գաղութներու հայութեան արդէն իսկ երերուն և ոչ կատարեալ հանգիստը խանգարող ոճիրը, որ

սեպտեմբեր 28-ին Պէյրութի մէջ գործուած է: Կը դատապարտենք: Եւ մեր արդար զայրոյթն ու ցասումը կը յայտնենք տարարախտ Վահան Վարդապետեանը քինախնդրութեամբ սպաննող Կայէ՛ններու հանդէպ և կը պահանջենք, որ վերջ տրուի եղբայրասպան այս դէպքերուն, որոնք պարզապէս դաշու՛թներու կեանքը վտանգելու բնոյթն ունին:

Ի դիմաց հայ կրթասիրաց «Հայկաեփն» միութեան Եւֆայի՝ աեմնապետ՝ Ն. Նիկողոսեան, ասեմադայի՝ Բ. Այնթապլեան:

«Յուսաբեր»ի միջոցով

Պէյրութի Ազգ. գաւառական ժողովի անդամներէն Պ. Վահան Վարդապետեանի դէմ կատարուած եղբայրասպան ոճիրը խոր զայրոյթ պատճառեց մեզ: Մենք կը դատապարտենք այն ոճրապարտ մտայնութիւնը, որուն ծայրը սկսաւ Լիոնէն և տարածուեցաւ Յունաստան և Սիւրիա և որուն նպատակն է վտանգի ենթարկել գաղութահայութեան կեանքը:

Պայքարի այս գոեհիկ եղեռնագործ ձեւը, որ ընդգրկած են կարգ մը տարրեր գաղութներու մէջ, քաղաքային կռիւներու կրնայ մղել թափառական հայութիւնը, որու հետեանքը շատ վատ պիտի ըլլայ գաղութահայութեան համար: Հետեւաբար կ'առաջարկենք ազգովին միջոցներ մտածել այդ կարգի եղբայրասպան ոճրագործներն ու անոնց պարազուլները պատժելու համար:

Ազեֆս. Ռամկիի հանրակառփի հայ գործաւորներէն. 14 ստորագրուիւն.

(Յականէ անուանէ ստորագրութիւնները տես «Յուսաբեր», 1926, թիւ 178-ը):

«Յուսաբեր»ի միջոցով

Վահան Վարդապետեանի թանկագին անձին դէմ եղբայրադաւ ձեռքերու կողմէ գործուած ոճիրը մեր արեւը կը համակէ ամենադառն սուգով:

Բուռն կերպով կը դատապարտենք այս անարգ ոճիրը, որ գործուած է ցածութեան մրուրով սնանող ոճրագործներու կողմէ:

Մեր անկեղծ ցաւակցութիւնները վշտարեկ այրիին և ընտանիքի անդամներուն:

Ի դիմաց Գահիրէի Հայ ելեֆ. մեմեմագործներու՝ Արամ Մաքայեան, Սմբատ Մարուֆեան:

III

Կուսակցական մարմիններից ստացած հեռագիրները ու գրութիւնները

Պատուաճամ Ղ. Յ. Գաւառակցութեան վարչութեան Տիարք.

Նրէկ երեկոյեան Պ. Վահան Վարդապետեանի վրայ գործած ոճիրին առթիւ կուգանք յայտնել մեր խորունկ ցաւակցութիւնը և կը դատապարտենք ոճիրը, որու կողմէ ալ ըլլայ սոյն գաղափարական պարկեշտ անհատի մը մահացումը կուսակցութեանս բոլոր անհատներուն, մանաւանդ բոլոր ազգին ցաւ պտտճառած է:

Արդ հաճեցէք ընդունել մեր ցաւակցութիւնը և զայն հաղորդել նաեւ Ձեր յարգելի ընկերոջ պարագաներուն:

Ի դիմաց Ռ. Ազատական կուսակցութեան վարչութեան (ստորագրութիւն). Պէյրութ.

«Նոր Փիւնիկ»ի միջոցով

Քորին ցաւակցութիւններ սիրելի Վահանի մարտիրոսացման համար: Հաճեցէք մեր վշտի թարգմանը ըլլալ ընտանիքին մօտ: Մեր զգուանքը նողկալի ոճերին հեղինակներուն:

Հ. Յ. Դաւենակցութեան Եղիպօսսի Կ. կոմիտէ:

Միտասարդաց միութեան հեռագիրը

Հ. Յ. Դաշնակցութեան Աղեքսանդրիոյ երիտասարդաց միութիւնը ներկայիս կուգայ իր բուն ցասումը յայտնելու այն եղբայրասպան ոճերին դէմ, որ տեղի ունեցաւ Պէյրութի մէջ, զո՞նք մը խլելով հայութեան պատուական զաւակներու դասէն, յանձին ողբացեալ ընկեր Վահան Վարդապետեանի:

Հակադաշնակցական մոլեռանդ պայքարը, որ կը մղուի ներկայիս գաղութներու մէջ, ուրիշ հետեանք չի կրնար ունենալ, բայց եթէ հիւժեղ և քայքայել հայութեան այն ստուար զանգուածը, որ այսօր կ'ապրի արտասահմանի մէջ: Ամէն գիտակից հայ և մանաւանդ ամէն Դաշնակցական պէտք է արգելք ըլլայ այդ անդարմանելի աղէտին, հետապնդելով պատիժը անուղղայ ազգադաւաններու:

Հ. Յ. Դաւենակցութեան Աղեքսանդրիոյ Միտասարդաց Վարչութիւն

Պրագայի ուսանողութեան գրութիւնը Սիւրիոյ Կ. կոմիտէին

Սիրելի ընկերներ, Վահան Վարդապետեանի եղբունական սպանութեան լուրը մեծ յուզում առաջ բերաւ մեր կուսակցական ուսանողական շարքերի մէջ. այդ առթիւ յայտնում ենք մեր խորունկ ցաւակցութիւնն ու զայրոյթը:

Պրագայի Հ. Յ. Դ. ուսանողները գտնում են, որ գաղութահայ իրականութեան մէջ վխտացող ժողովրդի տականքների լպիրշ գործնէութիւնը պէտք է վերջնականապէս սանձահարել և ոճրի հեղինակներին ամենախիստ կերպով պատժել:

Ընկերական բարեկերպ՝ Հ. Յ. Դ. Ուսան. Վարչութեան՝ Ն. Նիկողոսեան*.

IV

Համաժողովրդային բողոք անարգ ոճրի դէմ
Մուսաղեմ, 15 Հոկտ. 926

Վերջին երկուքէն երեք տարիներու ընթացքին՝ գաղութահայութեան մասամբ խաղաղած կեանքը յանկարծ անհանգիստ դարձաւ, և թափառական հայք սկսաւ ամենուրեք օտարներու անարգանքին արժանանալ:

Լիոնէն և Աթէնքէն վերջ. այժմ ալ Սիւրիայէն կը լսենք արձագանգը եղբայրասպան կռիւներու և հրէշային ոճրի մը, որը կատարելապէս բարբարոսային է և միայն ու միայն վայրենիներուն մասնայատուկ կրակի վրայ նստած խեղճ հայութեան արիւնախում ոտխներու թիւը աշխարհի վրայ կարծես քիչ ըլլար,

Ճանօթ. — Սիւրիոյ, Եգիպտոսի և այլ գաղութների Կ. կոմիտէութեանց շրջանների բոլոր մարմինները, Վ. Վարդապետեանի սպանութեան առթիւ, ցաւակցութիւն ու զայրոյթ են յայտնել, գլխաւորապէս «Յուսարեո» ի և «Նոր Փիւնիկ» ի խմբագրութեանց միջոցով: Գրքոյիլը չձանրարեռնելու համար, չբերինք բոլոր գրութիւններն ու հեռագիրները:

հիմա ալ եղբայրը իր եղբորը արիւնը թափէ՝ . . . որ-
քան զազդելի է:

Մէկ քանի փոքրոգի սմսեղուկ և ճիւղ անհատ-
ներու երեսէն, ուրիշներու աչքին բաւական է որքան
«անբաղձալի» և «խռովարար» տարրեր ճանչցուեցանք:
Զգաստ և փափկանկատ ըլլալ, այնուհետև մեր ա-
ռօրեայ կարգախօսը պէտք է դառնայ, այլապէս՝ մեռ-
ցուցին մեզ, կը մեռցնեն և կը մեռնենք ազգովին:

Մեզի համար պարագան նոյնը պիտի ըլլար,
Վարդապետեանի տեղ, եթէ ուրիշ մը սպանուած ըլ-
լար, ուրիշ հայ ոճրագործի կողմէ. էականը ասանկ
փափուկ չըջանի, հայը հայուն, անգամ ուրիշ ուէ
մէկուն՝ արիւնը պէտք չէ թափէ . . .

Ոճրային արարքները ամէն տեղ, և հասարակա-
կան բոլոր խաւերուն մէջ դատապարտուծ են արժանի
պատիժով քաւելու. ուրեմն մենք ալ իրրև Երուսա-
ղէմ բնակող սրտցաւ ազգայիններ, յախուռն կը նզո-
վենք ու կը դատապարտենք բոլոր ոճրածին գործքե-
րը, մանաւանդ վերջին անգամ Պէյրութի մէջ գործը-
ուած սեպտ. 28-ի ոճիրն ու ոճրագործները:

Մանօթ. — Պատճէն մէկ մէկ հատ զրկուած է «Յու-
սարեք»-ին և «Արև»-ին Գահիրէ: Նոյնը ձեզ («Ն. Փիւ-
նիկ»-ին և Ա. Ա.) կը զրկուի հրատարակութեան խնդրա-
նօք:

Սոյն գրութեան տակ յականէ անուանէ դրուած
են 70 ստորագրութիւններ: Տես «Նոր Փիւնիկ» 1928,
թիւ 181:

Հոկտեմբեր 16. ին. Մայիսեան սրահի մէջ տեղի
ունեցած «Դասնակցութեան Օրուան» հանդէսին, ընկեր
Հ. Օհանջանեանի առաջարկով հետեւեալ բանաձեւը ըն-
դունուած է հասարակութեան կողմէ

«Հ. Յ. Դ. օրուան առթիւ՝ խմբուած հասարա-
կութիւնը, խորապէս ցնցուած այն անարգ ոճիրէն,
որ տեղի ունեցաւ Պէյրութի մէջ և որուն զոհ գնաց
Սիւրիահայութեան լաւագոյն դէմքերէն Վահան
Վարդապետեանը, կուգայ իր անվերապահ դատա-
պարտութեան խօսքն ըսելու վատնոգի մարդասպան-
ներու և եղբայրադաւ ոճիրներու հեղինակներուն:

Մենք կուգանք պահանջելու, որ մօլթիին մէջ
գործող ձեռքերը վերջ տան վերջապէս անարգ դաւե-
րուն և կուսակցական պայքարի քողին տակ՝ վտան-
գի չենթարկեն մեր ազգային ամբողջութիւնն ու
գաղութահայութեան ճակատագիրը:

Կուգանք պահանջելու, որ Ազգին բոլոր առողջ
ու զգաստ տարրերը համախմբուին քով քովի և հա-
ւաքարար ու միացած ուժերով՝ հզօր պատուար մը
ստեղծեն այն բոլոր մութ, ոճրագործ ու ազգադաւ
տարրերուն առջեւ, որոնք նպատակ ըրած են եղբայ-
րասպան կռիւներով վերջնականապէս քայքայել մեր
ամբողջութիւնն ու ջլատել մեր ազգային կորովը»:

Տես «Յուսարեք» 1925, թիւ 169.

Կիւրիքի հայրենակցականի խորհրդածուրքիւր Վա-
հան Վարդապետեանի սպանութեան առթիւ. Ամերիկա.
Զգիտենք ի՞նչ ոճրածին բնագրէ և ի՞նչ կոյր
դրդապատճառներէ ծագած ըլլալու է այն անորակելի
ոճիրը, այն եղբայրասպան արիւնահեղութիւնը, որ
տեղի է ունեցած վերջերս Պէյրութի գաւառական ժո-
ղովի ընտրութենէն ամիջապէս վերջ, նոյնինքն ժո-
ղովականներու ներկայութեան:

Կ'երևի հայուն ինքնագիտակցութիւնը, հայ ան-
հատին «ե»-ը դեռ կը գտնուի այն աստիճան նուազօր,
այնքան ստրուկ ու գծուծ իր հաշիւներուն մէջ,
որ ի զուր կը փնտռես արքայ մը անոր մէջ, այն է

վեհանձնուժիւնը, չկայ արքայական վեհանձնութիւնը հանդէպ իր գաղափարական հակառակորդին, չկայ վերջապէս ինքնագիտակցութեան այն աղնիւ ու վեհանձն շուքը, որ կարենար յարգել արժանապատուութիւնն ու ժողովրդականութիւնը իր դիմացիներին, և ահաւասիկ կոյր եսի՛ն ներշնչած քամին կը տեսնուի մերթ Լիոն, մերթ Աթէնք, մերթ Պէյրուսթ, խօլական ու արիւնտ . . .

Չկրցանք ըմբռնել թէ ոճրագործը ինչո՞վ կրցաւ օգտուիլ, մարելով արեւը ընտանիքի ու զաւակներու տէր հօր մը, խափանելով մաքուր ու անձնուէր հայրենասէրի մը անկեղծ ջանքերն ու նկրտումները, օգտակար հանդիսանալու ամենու՛ն, իր ազգակցին . իր հայրենակցին և իր համայնքին :

Վահան Վարդապետեան սպանուած . . .

Մահաբոյր գոյժը հասած է ամէն մի հայրենակցի ականջին ու սրտին, նախ չհաւատալու տրուած, ապա ամէնքը շչմած, շուարած . . .

Եւ խորհիլ թէ մեր հայրենակցականի գլխաւոր ձգտումներէն ու նպատակներէն է եղած որքեր սղօտել, որքեր պատասպարել ու խնամել, և հա՛յ մը աւելի շատցնել մեր բազմիցս կոտորակուած, նուա՛յ թըւին վրայ . . . Ու միևնոյն ժամանակ տեսնել այսպէս ազնիւ ու ինքնանուէր հայրենակցի մը տապալու մը պարտականութեան ճամբուն վրայ, վատնողի հայրու մը դաւաճան գնդակով :

Սա արդէն ինքնին կը կուտակէ մեր թոյնն ու դատումը, լուտանքն ու անէծքը այդ զգուհիլի ու հազար անգամ անխիծուած ոճրագործին դէմ, որուն ուղեղին ծալքերուն մէջ կ'ընդնշմարուին բորբոսած գաղափարաբանութեան մը կեղտերը :

Գիւրինի հայրենակցականի բոլոր անգամները ի-

րենց զգուանքն ու նախատինքը շարտելով եղեռնագործի երեսին, կը յուտան տեսնել ընդփոյթ արդարութեան պողպատէ ձեռքը սոյն անպիտան դաւաճանի վրդին :

Եւ սա պիտի ըլլայ գէթ նուազագոյն մխիթարանքը զո՛հին այնքան գուրգուրացած սգաւոր այրիին . ու զաւակներուն, ինչպէս նաև իր սիրելի հայրենակիցներուն :

Յարգանք քեզ, սիրելի Վահան, դուն որ տառապեցար որրին և այրիին ի խնդիր, դուն որ քու կարելիք ընելով գուրգուրացիր անոնց վրայ իրրև քու հարազատ զաւակներդ, ափսո՛ս, բախտի չար բերումով, ահաւասիկ երեք որրուկներ ալ դուն ձգեցիր քու ետև, քեզի՛ կարօտ, քեզի՛ փնտռող ու քեզի՛ կանչող ձագուկներ :

Յարգանք քեզ, ու հանդիստ ոսկորներուդ . թող մեր սրտերը ըլլան քեզ մեհեան, ու մեր արցունքները բալասան քու արիւնող վէրքերուդ, և այս թող ըլլայ քու հեռաւոր բայց սիրելի հայրենակիցներէդ իր ձաղկեպսակ քու թարմ հողակոտիդ վրայ :

* *

Այսպէս հազարաւորներու վրայ կաւելնան նորերը . որքեր, որքեր . . . թուրքին թողուցած պակասը նոյն տառապակից ու բախտակից հայն է, որ կը լրացնէ, նոյն գաղթականութենէ վերապրող հայը՝ որ լուսնոտի մը հողեբանութեամբ իր եղբայրը կը սպանէ :

Գիւրինի հայրենակցականը ի տես այս եղբայրասպան նողկալի կուռին, Պէյրուսթ թէ այլուր, միայն և միայն նախատինք կրնայ սնուցանել խռովարարներուն դաւաղիրներուն ու մարդասպաններուն հանդէպ, ու

կը դատապարտէ զանոնք, ինչ գաղափարի ու դաւա-
նանքի ալ պատկանին...

Կիւրինի հայր. միութեան կեդր. վարչութիւն
(Կնիք)

V

Արիւն հոսեցնող ոճրագործների քստմնելի արար-
քը վրդովեց բովանդակ գաղութահայութիւնը: Հայ
մամուլը հանգամանօրէն քննեց ու պարզեց այդ յու-
զումնալից վիճակը: Անհրաժեշտ ենք համարում այդ
նպատակով գլխաւոր թերթերի հրապարակած խմբա-
գրականների մի մասը՝ կրճատումներով, բերել այս-
տեղ, գրքուկի ընթերցողներին ծանօթացնելու համար,
մեր դժնդակ իրականութեան և զաղրելի սպանու-
թեան մասին եղած կարծիքների հետ:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՄԱՐՈՒՆ ՎՐԱԹ*

Խուժար մը դաւադիր տականքներու նամարտ
գնդակը խլեց մեր շարքերէն գաղափարական ընկեր
մը և զոհարերող հանրային գործիչ մը, Վահան Վար
դապետեան, որու եղերական սպանութիւնը խոր սու-
զով, անկեղծ վշտակցութեամբ և բուռն զայրոյթով
համակեց բովանդակ հայութիւնը:

Այն ինչ որ տեղի ունեցաւ երեքշաբթի երեկոյ,
անպատմելի է իր քստմնելի, ստոր բնոյթով, և ոչ մի-
այն վարկաբեկիչ, այլ և մահաբեր հայ բարի համ-
բաւին համար: Գիշերային, մութի մէջ դարանակալ
զինուած յարձակումը Ազգ. դաւառականի ժողովին
վրայ, կաթողիկոսարանին մէջ, և սպանութիւ-

Օտաւօր. — Խմբագրականների խորագիրները պա-
հել ենք նոյնութեամբ:

նը Լիբանանի հայոց ազգային գերագոյն մարմնի
և հայ դաղութի լաւագոյն անդամներէն ողորացեալ
Վահան Վարդապետեանի, այնքան ստորնեցուցիչ և
բարբարոս ղէպք մըն է, որ ոչ մէկ բացատրութեան
կը կարօտի:

Խոր է վիշտը և անպատմելի ցասումը, ի տես
դարանակալ սպանութեան մեր պատուական ընկերոջ,
որ ընկաւ հերոսաբար, պայքարի ճակատի առաջին գծի
վրայ, ժողովուրդի վերակազմութեան և հանգստին
թշնամի՝ ափ մը սրիկաներու ձեռքով, բայց որու կո-
րուստը յաղթանակն է ազգային գիտակցութեան և
պարտականութեան սրբազան ըմբռումին, ազգային
շահերու պաշտպանութեան, ընդդէմ անիշխանու-
թեան և անսանձ շահատակութիւններուն:

Չարաչար կը սխալին հայութեան թշնամիները,
սակայն, կարծելով, որ ոճիրով պիտի կարողանան
արգելք դնել ազգային իշխանութեան կաղմակերպու-
մին:

Ընկեր Վահան Վարդապետեան իր բիւրեղեայ
մաքրութեամբ, իր շիտակ, անկեղծ նկարագրով և
ըմբռնումներու բարձրութեամբ կը խորհրդանշէ վե-
հութիւնը նպատակին, որու համար ան ընկաւ:

«Նոր Փիւնիկ», 1926, հոկտեմբեր 2, Պէյրութ
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԷՆ

Անրիժ ու անկաշառ հանրային գործիչ մը, յար-
գուած ու սիրուած ամէնուէն կողմէ անխտիր՝ հար
թէ օտար, դաշնակցական թէ ոչ-դաշնակցական,
բիւրեղեայ դէմք մը, որուն մէջ տարրազած էին
հայրենասիրութեան, աղնութեան և անձնագոհու-
թեան զգացումները. — անա այս յուսատու դէմքն է,
որ այսօր կը մնչէ խաղաղիկ Սիւրիոյ զերեզմանատան

մէջ, զո՛հ գնալով ազգապիղծ խմբակի մը դաւադիր գնդակին :

Կրնա՞ք խորաչափել մեծութիւնն այն ցաւալի կացութեան, որ այսպիսի եղեռնագործութիւններով կը ստեղծուի դադութեանայ կեանքին մէջ :

Լիոն, Սելանիկ, Չահլէ, Պէյրութ. — ասիկա շարան մըն է ամբողջ, գիտակցօրէ՛ն նախաձեռնուած ու գիտակցաբար ուղղուած Լ. Յ. Դաշնակցութեան դէմ :

Ասոնք նախաքայլերն են այն ահաւոր երևոյթին, որ եղբայրասպանութիւն կը կոչուի :

Վրդովանքի ու մորմոքի ծանր զգացում մը համակած է մեզ մեր կրած անփոխարինելի կորուստին հանդէպ :

Կացութեան այս ահաւորութիւնը նկատի առնելով է ահա, որ մենք զգաստութեան յորդոր կ'ուղղենք բովանդակ հայութեան :

Կարծես զուգադիպօրէն տարաբախտ Վարդապետեանի նահատակութենէն ճիշտ քանի մը օր առաջ Լիրանանի ներկայացողական խորհուրդին մէջ Պէյրութի խլամ պատգամաւոր Օմար Տաուզ հայատեաց ճառ մը կ'արտասանէ, ուր կը յայտարարէ, որ հայութիւնը «անպիսաններու, անիշխանականներու եւ խառնակիչներու ցեղ մըն է», բաղկացած առաւելապէս ռուսաձիգ դաւադիրներէ, որոնց կեանքը ու գործը դուրս կը մնան ամեն հակակցիւնէ :

Ահա թէ ի՛նչ ծանր մթնոլորտի մէջ կ'ապրի ու կը շնչէ մեր դժբախտ ժողովրդի հոծ զանգուածը Սիւրիոյ մէջ :

«Յուսաբեր», 1926, Հոկտեմբեր 7, Գահիրէ.

ԱՆՁՕՐ ԿԱՏԱՂՈՒԹԻՒՆ*

Ընկեր Վահան Վարդապետեան զո՛հն է հրէշալին դաւադրութեան մը, որուն ցանցը Պէյրութի մէջ չի սահմափակուիր :

Ընկերոջ արիւնը կը ցատկէ շատ աւելի հեռուները, Փարիզէն մինչև Երեւան եւ այսպէս ալ պէտք է արձանագրուի պատմութեան մէջ, ճիշտ ինչպէս Լիոնի դէպքը, Աթէնքի սպանութիւնը կամ Սելանիկի ցոյցը :

Թուրք ծանօթ գործիչ մը, «Ֆէյյօզօֆ» Րիզա Թէվֆիգ, Կիլիկիոյ առաջին ջարդի առթիւ կը յայտարարէր. «Մեր մէջ հեքիճներ կան, որոնք վաթսուն փայլի համար մարդ կը սպաննեն» : Այդ հրէշներէն մեր մէջ ալ չեն պակսիր : Եւ օրական երեսուն ֆրանքը, որ այսօր աւելի իրական արժէք ունի քան Յուդայի երեսուն արծաթը, աննշան գումար մը չէ այդ սրիկաներուն համար :

Ի՛նչ է այս եղբայրասպանութեան շարժառիթը : Ճիշտ այն ինչ որ գլուխ պատուելի և արիւն թափելի կուտայ ուրիշ տեղեր : Երեւանի մեծ ու փոքր գործակալներուն ցանած որոմներն են որ կ'արգասաւորուին և կուռճանան : Օրուան նշանախօսն է. — Դաշնակցութիւնը քշել ասպարէզէն :

Երկար կը տևէ այս վիճակը : Չգիտենք : Անարժան հակառակորդներու այս անգոր կատաղութեան առջև, սուգի, կեղծիքի, քսութեան և գրգռութեան այս աղբակոյտին հանդէպ, կ'ուղէինք որ Դաշնակցութիւնը նորէն մնար նոյն պաղարիւն և անսասան :

Ծանօթ. — Սոֆիա հրատարակուող «Արաքս» թերթը զարմանալի զուգադիպութեամբ նոյն նիւթի մասին, նոյն օրը, նոյն խորագրի տակ խմբագրական է հրատարակել :

դիրքին վրայ, յանուն այս ժողովրդի գերագոյն շահերուն:

«Յառաջ», 1926, Հոկտեմբեր 15, Փարիզ.

ԱՆՉՕՐ ԿՍՏԱՂՈՒԹԻՒՆ

Մենք հանդիսատես եղանք եղբայրասպան ոճիրներու շարքի մը որ Ֆրանսայէն սկսաւ ու Յունաստանէն անցնելով, յանգեցաւ Պէյրութի ողբերգութեան և որուն զոհ գնաց հայութեան ամենէն սրտցաւ, ամենէն պարկեշտ և ամենէն նուիրուած զաւակներէն մին:

Այն քաղաքականութիւնը զոր որդեգրած են բոլշևիկեան խնկարկու հայ կուսակցութիւնները, կը սպառնայ գազութահայութեան ամենէն կենսական շահերուն: Ֆրանսայէն մինչև Սիւրիոյ և ամէն տեղ հայ ժողովուրդը կ'ապրի շատ փափուկ պայմաններումէջ, ամէն ոք պատրուակի մը կը նայի ճամբու դընելու համար զայն իր հողէն ուր՝ միշտ կը մնայ իրբ և անկոչ հիւր:

«Արախ» 1926, հոկտեմբեր 15. Սոֆիոյ.

ՈՃԻՐ ՄԸ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ

Ամիսներ առաջ կը գրէինք թէ յունահայ գաղութի մէջ պատահած դէպքերը անխուսափելիօրէն պիտի կրկնուին նաև Եգիպտոսի, Սիւրիոյ, Ֆրանսայի և ուրիշ հայ գաղութներու մէջ: Մեր գաւազակութիւնը դժբախտաբար կ'իրականանայ այսօր:

Արեան ծարաւէն տառապողներուն համար յագեցման ուրիշ միջոց չկայ: Իհարկէ կուսակցութիւնը պէտք է ամէն գնով քայքայել կը պահանջեն անոնք:

Իրրև քաղաքական կուսակցութիւն, Իհարկէ կը պահանջուի լրջախոհութիւն, պաշարիւնութիւն և շարժումներու չափաւորութիւն: Իսկ իրբ և յեղափոխական կուսակցութիւն, ան ունի պար-

տաւորութիւններ, որոնց զանցառութիւնը կրնայ մեծ շարիքներու դուռ բանալ:

«Նոր Օր», 1926, հոկտեմբեր 14, Աթէնք.

ՈՒՐԻՇ ԵՒՔ ՉԿԱՅ

Հրապարակագիր մը օրինակ, որ տարիներէ իվեր գրիչ կը շարժէ, անցեալ օր ամենայն լրջութեամբ կ'առաջարկէր ցրուել Պէյրութի գաւառական ժողովը, իրրև քար գալթակողութեան: Ինչ է եղած. — Իսնի մը բախտախնդիրներ, 50 ական ոսկի ստանալով ծանօթ աղբիւրէ մը, յանձն կ'առնեն յարձակիլ Ազգային իշխանութեան վրայ և իրենց ձեռքերը ներկել եղբոր արիւնով: Եւ անա ռոզմիտ» ները կ'առաջարկեն տեղի տալ, ցրուել ժողովը, որպէսզի նորէն արիւն չ'հոսի. . .

Եթէ այս «չքնաղ» տրամաբանութիւնը ընդունուէր, այն ատեն պէտք պիտի ըլլար վերջ տալ խօսքը դարանական դրութեան, որ այսօր որդեգրուած է բոլոր քաղաքակիրթ երկիրներու կողմէ: Չէ՞ որ երեսփոխանական և այլ ընտրութիւններու ընթացքին մինչև հիմա անհամար անձեր զոհուած են, առանց հաշուելու պատուած գլուխներու թիւը: Մակերեսային դիտողները միայն կրնան այս տեսակ դարմաններու հաւատալ:

Իսոյ ինչու՞ հեռուները երթալ, երբ ընթացիկ կեանքն իսկ մէկէ աւելի պերճախօս փաստեր կը հայթայթէ: Պէյրութի գաւառական ժողովը ցրուել՝ կը նշանակէ պարզապէս անթեղել հրավառ կրակ մը, մըղելով բախտախնդիրները որ դաշոյնն ու ատրճանակը հարկադրեն ազատ ջուէին: Մնաց որ, ներկայ ժողովին կուսակիցները - մեծամասնութիւնը - կրնան վաղը նոյն «ազդու» միջոցին գիմել, և փոխադարձաբար սուրով ու գնդակով խօսիլ գալիք իշխանութեան

հետ, քանի որ կը տեսնեն թէ յողովրդական քուէներու մեծամասնութեան տիրանալը տակաւին չի բաւեր, յաջողութիւնն ունենալու համար:

Ուրիշ պարագայ մը. երբ գործը արհեստով խառնակիչներու և վարձկաններու հետ է, կարելի չէ գիշումով գործ քայեցնել:

Պէտք է արմատական դարմանի մասին խորհիլ, փոխանակ թեթեւ եզրակացութիւններու երթալու, և ամիրայական բարքերը վերակենդանացնելու:

«Մարմարա», 1926, Հոկտեմբեր 17, 4. Պոլիս*

ՈՃՐԱԳՈՐԾ ԶՅՈՒԲԸ

Սպանողները բոլշեւիկ-հնչակեան խմբակէն են և սպանութիւնը ակներևօրէն կատարած են կանխաւեճածուած ծրագրով մը:

Հետեւաբար, կարելի է ըսել, թէ գործ ունինք պարզ ոճիւրի մը հետ, որ երբեք նման չէ Լիոնի մէջ կատարուած ծանօթ սպանութեան, որովհետեւ հոն ըսպաննուողը ժողովին մէջ ներս խուժող և նախայարձակ անձ մը կամ անձեր էին:

Թէ՛ Լիոնի և թէ՛ Պէյրութի մէջ նախայարձակներն ու ոճրագործները մեր հակառակորդներէն են:

Թէ՛ Լիոնի արիւնոտ դէպքի ատեն, ինչպէս պարզուեցաւ, և թէ՛ Պէյրութի այս ոճիրին մէջ, ինչպէս վստահ ենք, կատարուած է վերեմ տրուած հրաման մը: Եւ այդ հրամանը ապահովաբար գացած է խորհրդային գլխաւոր կեդրոններէն:

Սորհրդային գործակալներու այս ոճիրներուն նպատակը դժուար չէ հասկանալ: «Համաշխարհային յեղափոխութեան» ցաւագար ասպետները պարզապէս

Մանօթ. — Այժմ «Մարմարան» փակուած է: Փոխարէնը լոյս է տեսնում «Ազգարար»:

կուզեն տակն ու վրայ ընել մեր գաղութներու խաղաղ կեանքը, կ'ուզեն քանդել մեր ազգային կազմակերպութիւնները: Եւ որովհետեւ ազատ խօսքի ազատ երկիրներու մէջ անոնք անկարող են յաջողութեամբ տանիլ իրենց քայքայիչ պրոպագանդը, անոնք կը դիմեն չեկիտական բռնութիւններու և ոճիրներու՝ ջանալով անարեկելի իրենց հակառակորդները և՛ խուճապ առաջ բերելով՝ քանդել մեր ազգային կազմակերպութիւնները:

Մոսկուայի ծառաներուն ատելի են մեր ազգային կազմակերպութիւնները արտասահմանի մէջ: Եւ Մոսկուայի ծառաները դրամ չեն խնայեր քայքայելու մեր գաղութները և սպաննելու ազգային ոգին ու ձգտումները արտասահմանի հայութեան մէջ, ինչպէս կ'ընեն նաև Հայաստանի մէջ:

Անոնք իրենց բազմաթիւ գործակալներով և պըրովակատորներով լեցուցեր են մեր գաղութները: Անոնք «կարմիր» պրոպագանդ կ'ընեն ամեն տեղ տեղաշարժի թափով մը ու աննախընթաց չափերով: Անոնք Հայաստանի շրջելու կեղծ խոտուումներով կը ճգնին հրապուրել մեր անապատտան ու թշուառ գաղթականական բեկորները: Եւ երբ իրենց այս բոլոր ճիգերը իրենց բաղձացած արդիւնքը չեն տար, անոնք բռնութեան և ոյժին կը դիմեն, ինչպէս սովոր են ընել իրենց արիւնոտ բռնակալութեան օտահամաններուն մէջ:

Անկարելի է, սակայն, անտարբեր դիտել ոճրագործ ձեռքին այս ազգադաւ գործունէութիւնը:

Կազմակերպուած և գիտակից հայութիւնը պարտաւոր է կտրել իր քայքայման ու արեան ծարաւի այդ ոճրագործ ձեռքը...

«Հայրենիք» օրաթերթ, 1926, հոկտեմբեր 24, Բոսնի.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մերձ ՆՊԱՏԱԿԸ 5
ԵՐԿՈՒ ԽՕՄԲ 7

ԱՌՆԱԶԻՆ ԳԼՈՒԽ

Սիւրիոյ հայ գաղութը.- Թուական տուեալներ.-
Լիբանանի հայութիւնը.- Ազգային ժամանակաւոր մար-
մին.- Ազգային խորհուրդ.- Լիբանանի Ազգ. գաւ-
ժողովի առաջին ընտրութիւնը.- Երկրորդ ընտրութիւ-
նը 9

ԵՐԿՐՈՐԳ ԳԼՈՒԽ

Մամուլի կարծիք եւ Գաւառականի Սեպտեմբեր 16-ի
նիստը.- Գաւառների խառնակութիւնները.- Սեպտեմբեր
28-ի նիստը.- Քաղաքական ժողովի ընտրութիւնը.- Յար-
ձակում գաւառականի վրայ.- Վ. Վարդապետեանի ըս-
պանութիւնը.- Յուդարկաւորութիւնը 26

ԵՐՐՈՐԳ ԳԼՈՒԽ

Վ. Վարդապետեանի կենսագրութիւնը.- Սազած
կրթութիւնը.- Անձնական կեանքը.- Հասարակական
գործիչ.- Նրա յեղափոխական անցեալը.- Բնութագի-
ծը 44

ԶՈՐՐՈՐԳ ԳԼՈՒԽ

Կարողիկոսի յոդուածը.- Ցաւակցական հեռագիր-
ներ եւ գրութիւններ.- Համաժողովրդային բողոքներ.-
Բանաձեւ.- Կիւրիցի հարեանակցականի խորհրդածու-
քիւնը.- Մամուլի ձայնը 53



11
11
11

11

11
11
11

24


6 1/2

« Ազգային գրադարան



NL0397982

6190



ՀԱՍԻՆ:

Hagop Der Melkonian

B. P. 16

Beyrouth (Syrie)